ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1955 Общественные науки

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*
(1850—1890 ԹԹ.)

Հինգերորդ գլուխ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնատնտեսության քայքայումը.— *XIX դարի 50—60-ական թվականներին ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Հայաստանի գյուղում բնատնտեսության քայքայումը ավելի ուժեղացավ։*

Փողը և փոխանակությունը գյուղացու տնտեսության մեջ սկսեցին ավելի շուշափելի դեր խաղալ։ Պետական դրամական տուրքերը տալու, կալվածատիրոջ դրամական պարհակները կատարելու, ապա իր առօրյա կենսական կարիքները հոգալու համար գյուղացին ստիպված էր իր տնտեսության արդյունքների մի մասը վաճառքի հանել, կամ դիմել գյուղական վաշխառուին, որն արդեն սկսել էր մեծ չափերի դառնալ աշխատավոր գյուղացու համար։

1850—1860-ական թվականներին գյուղում բավական մեծ ծավալ ստացավ հողի վաճառքը։ Փողն ու փոխանակությունը մուտք էին գործում գյուղ, որի հետևանքով ուժեղանում էր գյուղացիության քայքայման ու շերտավորման պրոցեսը։ Այսպես, օրինակ, 1865 թ. գյուղական առևտրական շերտը, բացի գյուղի շրջանակում առևտուրը և փոխանակությունը կազմակերպելուց, Երևանի նահանգի հինգ քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Նախիջևանում, Օրդուբադում և Նոր Բայազետում գյուղատնտեսական արդյունքների վաճառքի համար վերցրել էր 300-ից ավելի առևտրական վկայական և շուկա էր հանում բամբակ, զանազան մրգեր, եղջյուրավոր անասուններ, կաշի, ոզի, մետաքս, աղ և այլն։

Երևանի նահանգի գյուղացիական տնտեսության արդյունքները շուկա էին հանվում ոչ միայն տեղում, այլև Անդրկովկասի կենտրոն Թիֆլիսում (բամբակ, բրինձ, քունջութի յուղ, գարի, դինի), և Ռուսաստանում (բամբակ)։ Որոշ ապրանքներ (օրինակ՝ բրինձ) վաճառքի էր հանվում Թյուրքիայում։

Այսպիսի պայմաններում ուժեղանում էր գյուղացու ճնշումն ու շահագործումը կալվածատիրոջ կողմից, որը փողի և շուկայի ազդեցության տակ մեծացնում էր իր պահանջները գյուղացու նկատմամբ, ձգտում էր ավելացնել նրա ամեն տեսակի պարհակները և տուրքերը։

---

* *Հայ ժողովրդի պատմության ձեռնարկի երկրորդ հատորի սույն 5-րդ և 6-րդ գլուխները գրել են պրոֆ. պրոֆ. Վ. Բեսուգին (5-րդ գլխի I, III և 6-րդ գլխի I ենթագլուխները), Վ. Պարսամյանը (5-րդ գլխի II, IV և 6-րդ գլխի II ենթագլուխները), Ս. Ներսիսյանը (6-րդ գլխի III, IV և V ենթագլուխները)։ Խնդրում ենք ընթերցողներին՝ իրենց դիտողություններն ուղարկել խմբագրություն։ Խմբ.։*

Ցարիզմի գաղութային քաղաքականությունը. ծանր տուրքերը և չինովնիկների կամայականությունն ու բռնություններն իրենց հերթին առաջ էին բերում մեծ դժգոհություններ և բողոքներ նաև պետական գյուղացիների մեջ։

Այս բոլորի հետևանքով գյուղում սրվում էր դասակարգային պայքարը, տեղի էին ունենում գյուղացիական մասսայական հուզումներ և ելույթներ, ինչպես կալվածատերերի, այնպես էլ ցարական կառավարության դեմ։

Առևտրի զարգացումը և արդյունաբերության առաջին հաջողությունները.— Գյուղում սկսված տնտեսական և սոցիալական նոր երևույթները սերտորեն կապված էին քաղաքում զարգացող առևտրական հարաբերությունների, ինչպես և արևմտաեվրոպական ու գլխավորապես ռուսական արդյունաբերական ապրանքների գյուղ մուտք գործելու հետ։

Ռուսաստանից և Արևմտյան Եվրոպայից Անդրկովկաս ներմուծվող ապրանքների շնորհիվ զգալի չափով ուժեղացավ առևտուրը։ Այդ առևտրի մեջ մեծ դեր էին խաղում հայ վաճառականները։ Հայաստանի երկու քաղաքներում՝ Երևանում և Ալեքսանդրոպոլում 1850—1860-ական թվականներին նկատելի կերպով աշխուժացավ առևտուրը։ Առևտրականները մի կողմից՝ վաճառահանում էին տեղական գյուղատնտեսության հումքը, գլխավորապես բամբակը Ռուսաստանում, իսկ մյուս կողմից՝ տեղական շուկա էին բերում այնտեղի ձեռնարկությունների, մասնավորապես տեքստիլ արդյունաբերության արտադրանքը, որը ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում արդեն 1860-ական թթ. դուրս էր մղում ջուլհակ արհեստավորների կոպիտ ու թանկ գործվածքները։ Դրա հետևանքով այդ արհեստն էլ չքանում էր ոչ միայն քաղաքում, այլև գյուղում։ 1850—1860-ական թվականներին քաղաքային արհեստավորների տնտեսական անկախ դրությունը վտանգվել էր Անդրկովկասում։ Դրությունը ծանր էր հատկապես խոշոր առևտրական կենտրոններում։ Քաղաքային արհեստը քայքայվում էր նաև Հայաստանում։ Արհեստի արտադրանքը գլխավորապես սպասարկում էր քաղաքի բնակչության կարիքները և միայն քիչ դեպքերում էր դուրս գալիս ավելի լայն շուկա։ Այդպես էր, օրինակ, Ալեքսանդրոպոլի արհեստային արտադրանքը։ Արհեստավորները թե՛ Ալեքսանդրոպոլում և թե՛ Երևանում դեռ շարունակում էին մնալ ըստ արտադրության ճյուղերի կազմակերպված համքարությունների մեջ, թեև Երևանում արդեն կային զգալի թվով արհեստավորներ, որոնք չէին մտնում համքարությունների մեջ, որը դրանց քայքայման նշաններից մեկն էր։

Հայաստանում 1860-ական թվականներին արդյունաբերությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա։ Արդյունաբերական ձեռնարկությունները թեև կոչվում էին գործարան ու ֆաբրիկա, բայց փաստորեն արհեստանոցներ էին, որտեղ դեռևս չկային մեքենաներ։ Այդպես էին, օրինակ, կաշվի, օճառի, աղյուսի, կրի, օղու և այլ ձեռնարկությունները, որոնց ընդհանուր թիվը 1865 թ. ավելի էր 100-ից։

Համեմատաբար զարգացած էր Հայաստանի հանքային արդյունաբերությունը, որն ավելի էր կապված գյուղի հետ և ազդում էր նրա տնտեսական դրության վրա։

1850—1860-ական թվականներին Հայաստանի հանքային արդյունաբերությունն ուներ մի քանի պղնձաձուլական գործարաններ, որոնցից երկուսը՝ Ալավերդունը և Շամլուղինը գործում էին XIX դարի սկզբից՝ ռուսական տիրապետության հաստատման շրջանից, իսկ մնացածները հիմնվել էին XIX դարի

կեսերին։ Այդ տարիներին Հայաստանի պղնձաձուլական ձեռնարկություններն իրոք գործարաններ չէին, այլ մանուֆակտուրաներ, որոնցում արտադրությունը կատարվում էր ոչ թե մեքենաներով, այլ գործիքներով, ձեռքի աշխատանքով։

Մեծ չէին այդ ձեռնարկությունները, դրանց արտադրանքը դեռևս փոքր էր։ 1866 թ. պղնձաձուլական վեց գործարանների արտադրանքը կազմում էր 15,000 փութ։

1850-ական թվականներից պղնձարդյունաբերության մեջ կիրառվում էր վարձու աշխատանքը։ Իբրև վարձու բանվորներ աշխատում էին գլխավորապես շրջակա գյուղերի բնակիչները։

Հայաստանի լեռնարդյունաբերության կարևոր ճյուղերից էր նաև աղի արտադրությունը։ Աղը արտադրվում էր Կողբում և Նախիջևանում։ Աղահանքերը պատկանում էին պետությանը, որը կապալով էր տալիս մասնավոր ձեռնարկատերերին և մեծ եկամուտներ էր ստանում։ Աղահանքերում աշխատող բանվորական ուժը հարկադիր կարգով հավաքագրվում էր շրջակա գյուղացիներից, որոնց աշխատեցնում էին վաղ առավոտից մինչև ուշ երեկո և վճարում չնչին գործավարձ։

1850—1860 թթ. աղի արտադրությունը զգալի չափով աճում է։ 1853 թվականի 617 հազար փթի դիմաց, 1863 թվականին արտադրվում էր 1 միլիոն 304 հազար փութ աղ։ Հայաստանի աղը մեծ քանակությամբ վաճառահանվում էր ոչ միայն Անդրկովկասի շուկաներում, այլև արտահանվում Պարսկաստան և Թյուրքիա։

1850—1860 թթ. Թիֆլիսում և Բաքվում հիմնվում են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց մի զգալի մասը պատկանում էր հայ բուրժուազիային։ Այդ տարիներին Անդրկովկասի հայ առևտրական բուրժուազիայի մի մասը անցնում է արդյունաբերական գործունեության։

Առևտրի զարգացումը, դրամական հարաբերությունների աճը և կապիտալիստական արդյունաբերության առաջացումը Անդրկովկասում և Հայաստանում ուժեղացրին գյուղացու և քաղաքի մանր արտադրողների շահագործումն ու քայքայումը։ Ստեղծված այս նոր պայմաններում ավելի էր ծավալվում աշխատավորական մասսաների պայքարը իրենց կեղեքիչների դեմ։

Գյուղացիության պայքարը կալվածատիրության և ցարիզմի դեմ.— Ցարիզմի ճորտատիրական քաղաքականությունը, կալվածատերերի դաժան ճնշումները ոտքի են հանում գյուղացիական լայն մասսաներին։ Գյուղացիության պայքարը արտահայտվում էր զանազան ձևերով։

Կալվածատերերի կեղեքումներից ազատվելու համար՝ գյուղացիները շատ անգամ հրաժարվում էին ճանաչել նրանց կալվածատիրական իրավունքները։ Պայքարի այդ ձևին դիմեցին, օրինակ, 1849 թ. Զանգեզուրի գավառամասի Տեղ գյուղի բնակիչները, որոնք պնդում էին, թե կալվածատեր Ասադ բեկը ապօրինի ձևով է տիրացել իրենց գյուղին և իշխանության առաջ հարց էին դնում, որ իրենց ադատագրի նրա տիրապետությունից և անտանելի ճնշումներից։

Ցարական իշխանությունը ուժով հարկադրեց գյուղացիներին հնազանդվել կալվածատիրոջը, բայց գյուղացիների դիմադրությունն անկարելի եղավ կոտրել։ Մի քանի տարի հետո՝ 1852 թ. Անդրկովկասի իշխանության ներկայացուցիչներից մեկը ստիպված էր խոստովանել, որ գյուղացիների պայքարը բեկի դեմ շարունակվում է և ավելի է սրվում, որ նրանք «հասել են մոլեգնության»։

Տեսական և համառ բնույթ է ստանում Նոր Բայազետի գավառի Բջնի գյուղի հայ և ադրբեջանցի բնակիչների համերաշխ պայքարը թիուլիստ-մուլքադար Արսեն Սուլթանի դեմ 1850 թ.։ Գյուղացիները բողոքում են կրկնապատկված տուրքերի, պարհակների, կալվածատիրոջ դաժանությունների դեմ և Երևանի նահանգապետի առաջ հարց են դնում, որ իրենց տեղափոխեն պետական հողի վրա։ Գյուղացիների դիմումները մնում են անհետևանք։ Նրանց ղեկավարներից մի քանիսին բանտարկում են։

Գյուղացիները դիմում են մասսայական բողոքի։ Նրանք իրենց կանանց և երեխաների հետ գալիս են Երևան և զինվորական նահանգապետից պահանջում, որ իրենց ազատագրի կալվածատիրական լծից։ Սակայն նահանգապետը զինվորական ուժի միջոցով գյուղացիներին վերադարձնում է Բջնի և հարկադրում նրանց հնազանդվել կալվածատիրոջը։

1858 թ. բջնեցիները նորից են սկսում իրենց պայքարը կալվածատեր Արսեն Սուլթանի դեմ։ Նրանց այս պայքարը, որ տևում է մի քանի տարի, ճնշվում է ցարական կառավարության կողմից 1864 թվականին։

Կոտայքի շրջանի Էլառ գյուղի բնակիչները 1858 թ. տարիներ տևող պայքար են սկսում կալվածատիրոջ ճնշումների դեմ, որը կեղեքում էր նրանց գանապան նատուրալ պարհակներով ու տուրքերով և պահանջում էր Երևան տեղափոխել իր գանձած մթերքները։

Երևանի գավառի Զանգիբասարի գավառամասի Զոհրաբլու գյուղի բնակիչները բողոքում են մուլքադարի գյուղացիական հողերից օգտվելու իրավունքի դեմ և տեղական իշխանության որոշման հակառակ հրաժարվում են քաղաք տեղափոխել մուլքադարի հավաքած մթերքները։

Յուվայի գյուղացիները բողոքում են մուլքադարների հողային հափշտակությունների, տուրքերի ծանրացման, բերքը Երևան փոխադրելու և տեղական իշխանության մի շարք ապօրինի գանձումների դեմ։

1850-ական թվականներին կալվածատերերի և ցարական չինովնիկների ճնշումների ու կամայականությունների դեմ ուղղված այս և նման բազմաթիվ բողոքներին վերջ տալու համար ձեռք առնվեցին կտրուկ միջոցներ։ Սակայն չնայած դրան, գյուղացիության պայքարը շարունակվեց նաև հետագա տարիներին։

Զիբուխլու գյուղի (այժմ Ծովագյուղ) բնակիչները 1866 թ. բողոքում են Սևանի վանքի դեմ, որը փորձում է խլել նրանց հողի մի մասը և տեղական իշխանության դեմ, որը ձրի պարհակներ էր բարդում նրանց վրա։

Նույն տարում Ներքին Ախտայի, ապա Մաքրավանքի հայ գյուղացիներն ըմբոստանում են ցարական իշխանության գաղութային և ազգային ճնշման քաղաքականության դեմ։ 1866 թ. գավառապետի ճնշումների դեմ հավաքական բողոք են ներկայացնում Կովկասի փոխարքային Ալեքսանդրոպոլի գավառի 26 գյուղի բնակիչները։

Գյուղացիների բողոքը միայն զավառական իշխանության բազմաթիվ կամայականություններին և ճնշումներին չէր վերաբերում, այլ, երբեմն ուղղված էր ամբողջ պետական կարգի դեմ։

Կալվածատիրական գյուղացիությունը Հայաստանի գրեթե բոլոր գավառներում, հատկապես Երևանի, Էջմիածնի ու Նոր Բայազետի գավառներում, ըմբոստանում էր մուլքադարների և թիուլիստների լծի դեմ։ Նրանց հողային հափշտակումների, տուրքերի չափի, ապօրինի կալվածատիրական իրավունք-

ների, նատուրալ տուրքերը Երևան տեղափոխելու պարհակի, ջրից օգտվելու առթիվ շարունակ ընդհարումներ ու բախումներ էին տեղի ունենում կալվածատերերի, ցարական չինովնիկների ու ոստիկանության հետ։

Նոր Բայազետի Ջախրլու գյուղի բնակիչները տաս տարի շարունակ (1862—1872) պայքարում են իրենց աղալար Մուստաֆա աղայի ճնշումներից ազատվելու համար։

Էջմիածնի գավառի Ջաֆարապատ գյուղի բնակիչների պայքարը հողի և ջրի համար կալվածատեր Օհան Շահխաթունյանի դեմ 1865—1866 թթ. սուր բնույթ է ընդունում, գյուղացիներից շատերը մարմնական պատժի են ենթարկվում։

Չնայած ցարական իշխանության ձեռք առած բոլոր միջոցներին, կալվածատիրական ճնշման ու շահագործման ենթակա գյուղացու պայքարը չդադարեց։ Հեղափոխության շրջանում այդ պայքարն ավելի սրվեց, ուղղվելով ոչ միայն կալվածատերերի, այլև գյուղական վերնախավի դեմ։

Արհեստավորական ելույթներ.— XIX դարի 50-ական և մանավանդ 60-ական թվականներին Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի քաղաքների մանր արտադրողների՝ արհեստավորների դրությունը ավելի է ծանրանում։ Գործարանային էժան և լավ ապրանքը գուրս էր մղում շուկայից արհեստային արտադրությունը և տնտեսական քայքայման առաջ կանգնեցնում արհեստավորներին։

Խոշոր առևտրական բուրժուազիան նույնպիսի վտանգ էր ստեղծում նաև քաղաքային մանր առևտրական խավի համար։

Կապիտալիստական տնտեսության զարգացման պայմաններում քայքայվում էր ֆեոդալական հարաբերություններից ժառանգություն մնացած մանր արտադրողների և առևտրականների հասարակական-տնտեսական կազմակերպությունը՝ համքարությունները, որոնց միջոցով նրանք հավաքականորեն պաշտպանվում էին խոշոր բուրժուազիայի գրոհից։

Պայքարը համքարությունների և աճող բուրժուազիայի միջև գոյություն ուներ Անդրկովկասի բոլոր քաղաքներում, բայց այդ պայքարը սուր բնույթ ընդունեց հատկապես Անդրկովկասի կենտրոնում՝ Թիֆլիսում, որտեղ առևտրական, մասամբ նաև արդյունաբերական կյանքն ամենից ավելի էր զարգացած։

1850-ական թվականներին ընդառաջ գնալով բուրժուազիայի պահանջներին, ցարական կառավարությունը որոշ չափով սահմանափակեց համքարությունների իրավունքները, որը նոր դժգոհություններ առաջ բերեց արհեստավորության մեջ։ 1865 թվականին Թիֆլիսի արհեստավորները մասսայական ելույթ կազմակերպեցին քաղաքային ինքնավարության դեմ, որը 60,000 ռ. լրացուցիչ հարկ էր դրել նրանց վրա։

Քաղաքի արհեստավորները ու մանր առևտրականները, ավելի քան տաս հազար հոգի, ոտքի կանգնեցին, փակեցին իրենց խանութները և բողոքի ցույցեր կազմակերպեցին։ Ցուցարարները հարձակվեցին քաղաքագլխի բնակարանի վրա և քար ու քանդ արեցին այն։ Քաղաքագլուխը կարողացավ խույս տալ ժողովրդական ինքնադատաստանից, կնոջ հագուստով փախչելով իր տանից։

Ցարական կառավարությունը զենքի ուժով ճնշեց արհեստավորների ելույթը։ Կառավարությունը ընդունեց նոր կանոններ, որոնք ավելի էին սահ-

մանափակում համքարությունների իրավունքները։ Մանր առևտրականներին արգելվեց առանձին համքարություններ ունենալ։

Հայ ինտելիգենցիայի մի մասը համակրությամբ էր վերաբերվում համքարություններին և քննադատական դիրք բռնեց ցարիզմի քաղաքականության նկատմամբ։ Կառավարությունն այդ ինտելիգենցիայի աչքի ընկնող մի շարք ներկայացուցիչների մեղադրեց համքարություններին ըմբոստության մղելու մեջ և նրանց պատասխանատվության կանչեց։ Դրանց մեջ էին մանկավարժ և հասարակական գործիչ Պետրոս Շանշյանը, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս Սիմոնյանը և նշանավոր դրամատուրգ Դարիել Սունդուկյանը։

Ցարական ռեակցիոն թերթերը Թիֆլիսի համքարների այդ ելույթը օգտագործեցին, Անդրկովկասի ժողովուրդների դեմ թշնամական ագիտացիա ծավալելու և ազգային-դաղութային ճնշումներն ուժեղացնելու համար։

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ղրիմի պատերազմը.— Ղրիմի կամ Արևելյան պատերազմը սկսվեց 1853 թվականին Ռուսաստանի և Թյուրքիայի միջև։ 1854 թ. պատերազմի մեջ մտան Անգլիան և Ֆրանսիան։ Ավստրիան ու Պրուսիան նույնպես պաշտպան կանգնեցին Թյուրքիային։ Ռուսաստանի դեմ ստեղծվեց եվրոպական պետությունների թշնամական կոալիցիա։ Ռուսաստանը մեկուսացվեց։

Ղրիմի պատերազմը անարդարացի պատերազմ էր։ Ինչպես ցարական Ռուսաստանը, այնպես էլ Անգլիան, Ֆրանսիան և Թյուրքիան գավթողական նպատակներ էին հետապնդում։

Անգլո-ֆրանսիական դաղութարարները ձգտում էին իրենց ազդեցության տակ դնել Թյուրքիան և ամբողջ Մերձավոր Արևելքը։ Նրանք ցանկանում էին Ղրիմը և Կովկասը կտրել Ռուսաստանից։ Ցարական Ռուսաստանը իր հերթին ձգտում էր ամրապնդել իր դիրքերը Բալկաններում և նեղուցների վրա ու ապահովք ունենալ դեպի Միջերկրական ծով։

Այսպիսով, պատերազմի նախօրեին, մի կողմից Անգլիայի, Ֆրանսիայի ու Թյուրքիայի, իսկ մյուս կողմից Ռուսաստանի միջև ստեղծվել էր շահերի սուր բախում, որը և նրանց հանգեցրեց պատերազմի։

Պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում.— 1853 թ. աշնանը պատերազմական գործողությունները ծավալվեցին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում։ Թյուրքական զորքերը Անգլիայի ու Ֆրանսիայի դրդումով, սկսելով հարձակումը սկզբում որոշ հաջողություններ ունեցան։ Կովկասյան ռազմաճակատում նրանք մեծ ուժեր կենտրոնացնելով հոկտեմբերին կարողացան Փոթիի մոտ դեսանտ իջեցնել և գրավել ս. Նիկոլայի ամրոցը։ Անխնա ոչնչացվում էին գերի ընկած ռուս զինվորները և նույնիսկ խաղաղ բնակչությունը։

Նոյեմբերի սկզբներին թյուրքական զորքերը Ալեքսանդրոպոլից ոչ հեռու, Բայանդուր գյուղի մոտ հանկարծակի հարձակվելով գեներալ Օրբելիանու հրամանատարության տակ գտնվող ռուսական հետախուզական ջոկատի վրա, լուրջ կորուստներ պատճառեցին նրան։

Ներխուժելով Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանները, թյուրքական զորքերը կողոպտում ու ավերում էին գյուղերը, դաժան դատաստան

անենում տեղական բնակիչների նկատմամբ։ Մեծ վնասներ են կրում առանձնապես Սուրմալուի և Շիրակի գավառների հայ գյուղացիները։

Թյուրքերի հաջողությունները կարճատև են լինում։ Շուտով ռուսական զորքերը անցնում են հակահարձակման և խոշոր հաղթանակներ տանում։

Նոյեմբերին, 7000 հոգուց բաղկացած ռուսական մի ջոկատ, գեներալ-լեյտենանտ Անդրոնիկովի հրամանատարությամբ, պարտության է մատնում Վրաստան ներխուժած թյուրքական զորքերին և նրանց դուրս շպրտում Վրաստանի սահմաններից։

Նոյեմբերի 18-ին Սինոպի մոտ ռուսական նավատորմը Նախիմովի հրամանատարությամբ դլխովին ջախջախում է թյուրքական նավատորմը։ Թյուրքական նավատորմի հրամանատար Օսման փաշան իր շտաբի հետ գերի է վերցվում։

Կովկասյան ռազմաճակատում առաջին խոշոր ճակատամարտը տեղի է ունենում Կարսի ուղղությամբ Բաշկադըքլար գյուղի մոտ։ 1853 թ. նոյեմբերի 19-ին, ռուսական 10 հազարանոց զորամասը գեներալ Բեյբուտովի հրամանատարությամբ հարձակվում է թյուրքական 36 հազարանոց կորպուսի վրա։ Թյուրքական կորպուսի հրամանատար Ահմեդ փաշան, նկատի ունենալով իր զորքերի թվական գերակշռությունը, զոռոզամտորեն հայտարարում է, թե «ռուսները խելքները կորցրել են, ալլահը վկա, լոլորին պիտի ջարդեմ»։ Նա հրամայում է թոկեր պատրաստել, գերիներին կապելու և սուլթանին նվեր ուղարկելու համար։

Բայց, հակառակ սպասածին, ռուսական քաջարի զորքերը վաղ առավոտից մինչև ժամը 3-ը համառ ու վճռական մարտեր մղելով հակառակորդի դեմ, ծանր կորուստներ են պատճառում նրան և հարկադրում նրա փախչել դեպի Կարս։

Սինոպի և Բաշկադըքլարի փայլուն հաղթանակները ձախողում են Վրաստան և Հայաստան ներխուժելու և Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու թյուրքական զավթիչների ու նրանց թիկունքում կանգնած անգլո-ֆրանսական գաղութարարների առաջին իսկ քայլերը։

1853 թ. պատերազմական գործողությունները ցույց տվեցին, որ Թյուրքիան մենակ չէր կարող կռվել Ռուսաստանի դեմ։ 1854 թ. մարտին Անգլիան և Ֆրանսիան, թաքնվելով «Թյուրքիայի պաշտպանության» քողի տակ մտան պատերազմի մեջ։ Նրանք միաժամանակ սկսեցին ավելի շատ զենք ու ռազմամթերք մատակարարել թյուրքերին ու Շամիլին՝ Ռուսաստանի դեմ կռվելու համար։ Սեպտեմբերի սկզբին դաշնակիցները դեսանտ իջեցրին Ղրիմում և պաշարեցին Սև ծովի ռուսական նշանավոր ամրոց Սևաստոպոլը։

Սևաստոպոլի կայազորը 11 ամիս շարունակ, 1854 թ. հոկտեմբերից մինչև 1855 թ. օգոստոսը, հերոսաբար պաշտպանեց քաղաքը։ Սևաստոպոլի հերոս պաշտպանները, ծովակալ Կորնիլովի, Նախիմովի և Իստոմինի ղեկավարությամբ, քաջության ու արիության օրինակներ ցույց տվին և փառքով պսակեցին ռուսական ծովայինների անունը։

1854—1855 թթ. ռուսական զորքերը աչքի ընկնող հաջողություններ ունեցան նաև Կովկասյան ռազմաճակատում։ 1854 թվականի հունիսին թյուրքական զորքերը դուրս շպրտվեցին Գուրիայից և ապա Հին Բայազետից։ Հուլիսի 24-ին Թյուրուկ-դարայի ճակատամարտում ռուսական 18 հազարանոց զորամասը

գեներալ Բեյրութովի հրամանատարությամբ ջախջախիչ հարված հասցրեց թյուրքական 60 հազարանոց բանակին։ Կովի դաշտում թողնելով մեծ քանակությամբ սպանվածներ ու վիրավորներ, թյուրքերը խուճապահար փախան Կարս։

Շարունակելով իրենց առաջխաղացումը, 1855 թվականին ռուսական զորքերը գեներալ Մուրավևի հրամանատարությամբ գրավում են Արդահանը և ապա պաշարում Կարսի բերդը։ Թյուրքերը և նրանց անգլո-ֆրանսիական դաշնակիցները մոբիլիզացնում են իրենց բոլոր ուժերը Կարսը պաշտպանելու համար, բայց իզուր։ Չդիմանալով ռուսական զորքերի ճնշմանը, նոյեմբերի 16 (28)-ին Կարսի կայազորը հանձնվում է։

Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի տարած հաղթանակները, հատկապես Կարսի նշանավոր ամրության գրավումը, ինչպես իր ժամանակին Ֆ. Էնգելսն է նշել, փշրում են թյուրքական զորքերի մարտական եռանդը։ Այդ հաղթանակները որոշ չափով մեղմացնում են Ղրիմում ռուս զորքերի կրած պարտության տպավորությունը և զգալի գեր կատարում Փարիզի դաշտադրության պայմանագիրը կնքելու ժամանակ։

Հայերի մասնակցությունը պատերազմական գործողություններին.— Ղրիմի պատերազմը, նախորդ ռուս-թյուրքական պատերազմների նման, արևմտահայերի մեջ՝ Ռուսաստանի օգնությամբ թյուրքական լծից ազատագրվելու վառ հույսեր էր արթնացրել։ Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը, հատկապես գյուղացիությունը, որն ամենից ավելի վատթար պայմանների մեջ էր գտնվում, ձգտում էր ազատագրվել թյուրքական լծից և միանալ Ռուսաստանին։ Այդ պատճառով էլ, պատերազմի հենց սկզբից նրանք ոտքի էին կանգնել և ամեն կերպ օգնում էին ռուս զորքերին։ Հայերը, եղբայրակցորեն վրաց և ադրբեջանական ժողովուրդների հետ միասին, կազմում էին հետևակ ու հեծյալ կամավորական ջոկատներ և ակտիվ մասնակցություն ունենում պատերազմական գործողություններին։

Մանրամասն լինելով տեղական պայմաններին, նրանք ուղեցույցի դեր էին կատարում, հետախուզության գնում, հակառակորդի մասին անհրաժեշտ տեղեկություններ հայթայթում և այլն։

Հայ կամավորները առանձնապես աչքի էին ընկնում Բաշկադըքլարի ու Թյուրուկ-դարայի ճակատամարտերում և Կարսի գրավման համար մղված կռիվներում։ Արհամարհելով մահը, նրանք ռուս քաջարի զինվորների հետ նետվում էին կռվի առաջին դիծը և մահացու հարվածներ հասցնում թշնամուն։ Նրանցից շատերը իրենց ցուցաբերած քաջության և խիզախության համար պարգևատրվում են մարտական շքանշաններով ու մեդալներով։ Առավել աչքի ընկնողների թվում էին շտաբս-կապիտան Սահակյանը, դրենագերական գնդի շտաբս-կապիտան Արարատովին, ռոտմիստր Կոստանդին Արղությանը և ուրիշներ։

Ռուսական զորքերին ամեն կարգի աջակցություն էին ցույց տալիս նաև պատերազմական վայրերի թշնամու թիկունքում գտնվող հայ բնակիչները։ Թշնամու դեմ հաղթանակ տանելու համար նրանք չէին խնայում իրենց կյանքն ու դույքը։

Հայերի և Կովկասյան մյուս ժողովուրդների ակտիվ մասնակցությունը

պատերազմական գործողություններին, զգալի չափով նպաստեց ռուսական զորքերի հաղթանակին։ Բայց, Կովկասյան ռազմաճակատը օժանդակ նշանակություն ուներ և քանի որ գլխավոր ռազմաճակատում՝ Ղրիմում հաղթանակ տարան դաշնակիցները, ուստի ցարական Ռուսաստանը պարտություն կրեց։ Դաշնակիցները՝ Անգլիան, Ֆրանսիան, Թյուրքիան և Սարդինիան 1856 թվականի Փարիզի պայմանագրով Ռուսաստանի իրավունքները խիստ կերպով սահմանափակեցին, իսկ Անդրկովկասում գրաված տերիտորիաները բոլորը վերադարձվեցին Թյուրքիային։ Կարսը վերադարձվեց Թյուրքիային, իսկ Սևաստոպոլը, որը 1855 թ. գրավել էին դաշնակիցները՝ Ռուսաստանին։

Ղրիմի պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի տնտեսական և քաղաքական կյանքի վրա։ Ցարիզմի պարտությունը ակներև դարձրեց ճորտատիրական կարգերի նեխվածությունն ու փտածությունը ու նրանց լիկվիդացման անհրաժեշտությունը։ Ղրիմի պատերազմը նպաստեց նաև Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայերի հասարակական-քաղաքական կյանքի և ազգային ազատագրական շարժումների աշխուժացմանը։

Հայ ազգի կազմավորումը.— XIX դարի 50—60-ական թվականներին Հայաստանի և ողջ Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքում նոր տեղաշարժեր են կատարվում։ Ֆեոդալական հարաբերությունների ծոցում զարգացող կապիտալիզմի տարրերը հետզհետե թևակոխում են իրենց հաղթանակի շրջանը։ Անդրկովկասը մտնում է իր կապիտալիստական զարգացման փուլը։

Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող այս փոփոխությունները արդյունք էին մի կողմից երկրի ներքին զարգացման, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի ազդեցության։

XIX դարի կեսերին Ռուսաստանում բուռն թափով զարգացող կապիտալիզմը հետզհետե իր ոլորտի մեջ էր քաշում ծայրերկրամասերը, այդ թվում և Անդրկովկասը։ Գնալով ավելի ու ավելի էին ընդլայնվում Ռուսաստանի ու Անդրկովկասի տնտեսական կապերը, ամրապնդվում էին երկրի ներքին տնտեսական կապերը, ստեղծվում էին առևտրա-արդյունաբերական և կուլտուրական կենտրոններ։

1850—1860-ական թվականներին ազգային լեզվի, գրականության ու արվեստի, գիտության, մամուլի, թատրոնի և կուլտուրական այլ հաստատությունների զարգացումը թևակոխում է նոր փուլ, բարձրանում է ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը։

Տնտեսական կյանքի զարգացման հետևանքով փոխվում է նաև հասարակության կազմը, հանդես են գալիս կապիտալիստական հասարակարգի հիմնական անտագոնիստական դասակարգերը։ Հայ բուրժուազիան, որն Անդրկովկասում և Անդրկովկասից դուրս վաղուց տնտեսական ամուր դիրքեր էր գրավել, ձգտում էր իր ձեռքը վերցնել նաև ազգային քաղաքական և գաղափարական շարժման ղեկը, ազգի կոնսոլիդացիայի և ազգային կազմակերպությունների ստեղծման գործը։

XIX դարի երկրորդ կեսին, կապիտալիզմի զարգացման պատմական այս էպոխայում, ազգի բոլոր տարրերի՝ լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության պայմաններում, կազմավորվում են Անդրկովկասի բուրժուական ազգերը, դրանց թվում և հայ բուրժուական ազգը։

Ի. Վ. Ստալինը՝ խոսելով XIX դարի երկրորդ կեսում Ռուսաստանում կազմավորված բուրժուական ազգերի մասին, լատիշների, լիտվացիների, ուկրաինացիների, վրացիների և ուրիշների հետ նշում է նաև հայերին։

Հայ ազգի կազմավորումը տեղի է ունենում պատմական ուրույն պայմաններում, ցարական Ռուսաստանի և սուլթանական Թյուրքիայի տիրապետության տակ, հասարակական-քաղաքական տարբեր միջավայրերում։ Թե՛ ցարական և թե՛ մանավանդ սուլթանական հետամնաց բռնապետական կարգերը կաշկանդում, արգելակում էին հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացումը։ Այդ հանգամանքը խիստ բացասաբար էր անդրադառնում նաև հայ ազգի կազմավորման նորմալ ընթացքի վրա։

Թյուրքական վայրագ ասիմիլյատորները և ցարական մեծապետական շովինիստները ամեն կերպ աշխատում էին ձախողել հայերի ազգային կոնսոլիդացման պրոցեսը, խեղդել նրանց ազգային գիտակցությունը, լծի տակ պահել նրանց։ Բայց չնայած դրան, 1850—1860-ական թվականներից սկսած ավելի ու ավելի էր ամրապնդվում հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայերի ու արևմտահայերի հասարակական-քաղաքական և կուլտուրական կապերը, նրանց ազգային-ազատագրական համատեղ պայքարը թյուրքական ու ցարական բռնակալության դեմ։

Զրկված լինելով ազգային ինքնուրույնությունից, ինչպես մյուս ճնշված ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը կազմավորվում է որպես ազգ, չկարողանալով ստեղծել իր ազգային անկախ պետությունը։ Որ ազգային անկախ պետականությունը հայ ժողովուրդը ձեռք բերեց միմիայն սովետական կարգերի շնորհիվ։

3. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռևոլյուցիոն իրադրությունը Ռուսաստանում.— Արևելյան պատերազմում կրած պարտությունը և 1856 թ. Փարիզում կնքած ստորացուցիչ հաշտությունը մեծապես վարկաբեկեցին ցարական կառավարությանը. նրա դրությունը խախուտ դարձավ։

Ռուսաստանի տնտեսական զարգացման ուժը, ինչպես ասում էր Լենինը, տանում էր դեպի ճորտատիրական իրավունքի վերացումը։ Այդ նույն ուղղությամբ էր գործում ճորտ գյուղացիության մասսայական հզոր շարժումը։

Ցարիզմի ղեկավար շրջանները Ալեքսանդր II դլխավորությամբ սկսում էին հասկանալ, որ անկարելի է այլևս պահել Ռուսաստանում ճորտատիրական իրավունքը։ Ժողովուրդը չէր ցանկանում հին ձևով ապրել, նրա համար անհանդուրժելի էր դարձել ցարական կարգերի ամբողջ սիստեմը։

Պատերազմի հետևանքով ժողովրդական մասսաների կարիքն ու թշվառությունն է՛լ ավելի էր աճել, է՛լ ավելի էր սրվել նրա և շահագործող դասակարգերի հակասությունը։ Այդպիսի պայմաններում աճել էր նաև ժողովրդի ակտիվությունը, շահագործողների դեմ պայքարելու վճռականությունը։

Ռուսաստանում ստեղծված այսպիսի դրությունն է, որ Լենինը բնութագրում է իբրև ռևոլյուցիոն իրադրություն։ Այդ մթնոլորտում է կատարվում ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում 1861 թ. փետրվարի

19-ին։ Դրան նախորդող և հաջորդող մի քանի տարիները սուր դասակարգային պայքարի շրջան էին։ Հիմնական պայքարը տեղի էր ունենում գյուղացիության և կալվածատիրության ու նրա պետության միջև ճորտատիրական իրավունքը վերացնելու համար, որ հնարավոր էր երկու ուղիով՝ ռևոլյուցիայի և ռեֆորմի։

Առաջին ուղու համար պայքարում էր գյուղացիությունը. նա ցանկանում էր լիովին ազատագրվել կալվածատիրական ամեն տեսակի կախումից, ստանալ ամբողջ կալվածատիրական հողը։ Իսկ այդ կլիներ, եթե ոչնչացվեր կալվածատիրական պետությունը՝ ցարիզմը, այսինքն Ռուսաստանում կատարվեր ռևոլյուցիա։ Գյուղացիության պայքարը ցարիզմի դեմ ռևոլյուցիայի համար պաշտպանում էր ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական ինտելիգենցիան, որի գլուխն էին կանգնած Ռուսաստանում Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը, ինչպես և Գերցենն ու Օգարյովը, որոնք այդ ժամանակ ապրում էին Լոնդոնում։

Երկրորդ ուղին ռեֆորմի ուղին էր, որ ցանկանում էին կենսագործել կալվածատերերը ցարիզմի ղեկավարությամբ։ Այդ դեպքում համարյա անխախտ կմնար կալվածատերերի պետությունը, հողը կմնար հիմնականում էլի նրանց ձեռքում, գյուղացին ճորտատիրությունից կազատվեր, մի քիչ հող կստանար, բայց կալվածատիրական կախումից չէր փրկվի, իսկ կալվածատիրական տնտեսությունը հետզհետե կապիտալիստական կդառնար. այսպիսով որոշ զիջումների, ռեֆորմների միջոցով կալվածատերը կխուսափեր ռևոլյուցիայից, հետզհետե կհարմարվեր բուրժուական տնտեսական-քաղաքական զարգացող հարաբերություններին։

Ռուսաստանի բուրժուական զարգացման այդ երկրորդ ուղու կողմնակից էին նաև բուրժուազիան և նրա իդեոլոգները՝ լիբերալները, որոնք նույնպես դեմ էին ռևոլյուցիային, վախենում էին ժողովրդական շարժումներից և ճորտատիրության վերացումը հնարավոր էին համարում միմիայն վերևից, պետության ձեռքով, ռեֆորմի միջոցով։

Ճորտատիրական Ռուսաստանը բուրժուական Ռուսաստան դարձնելու երկու ուղու հարցը 1850-ական թվականների վերջից սկսած այն հիմնական հարցն էր, որի այս կամ այն լուծման համար էր ընթանում դասակարգային պայքարը։ Այդ պայքարի ելքից էր կախված Ռուսաստանի տնտեսական, քաղաքական, հասարակական ու կուլտուրական զարգացման ապագան ոչ միայն ռուս ժողովրդի, այլև նրա հետ սերտորեն կապված բազմաթիվ մեծ ու փոքր ժողովուրդների համար, որոնց տնտեսական-հասարակական զարգացման վրա մեծ էր ռուսական կյանքի ազդեցությունը։ Այդ վերաբերում էր, իհարկե, նաև արևելահայերի կյանքին, որի վրա գյուղացիական ռեֆորմը, նրա շուրջը պայքարող հոսանքների իդեաները չէին կարող խոր կնիք չդնել։

Հայ հասարակական հոսանքները.— 1850—1860 թթ. Հայաստանը իր տնտեսական զարգացման մակարդակով, Ռուսաստանի հետ համեմատած, բավականաչափ ետ էր մնում և ուներ իր առանձնահատուկ կողմերը։ Բայց, չնայած դրան, ռուսական կյանքը հուզող հասարակական-քաղաքական հարցերը յուրատեսակ արձագանք էին գտնում հայ իրականության մեջ, ապա ծագում էին նաև այլ հարցեր, որոնք կապված էին հայ ժողովրդի կյանքի առանձնահատկությունների հետ։

Ինչպես ողջ Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի և Հայաստանի համար, այդ էպոխայի հիմնական հարցը ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների և ռեակցիոն իդեոլոգիայի դեմ մղվող պայքարն էր։

Այդ պայքարը հայ իրականության մեջ հիմնականում երկու ուղղությամբ էր ընթանում՝ լիբերալ-բուրժուական և ռեոլյուցիոն-դեմոկրատական։

Հայ կյանքը ֆեոդալիզմի, միջնադարի գծերից մաքրելու և բուրժուական զարգացման ուղու վրա դնելու համար պայքարում էին հայ բուրժուական լուսավորիչները, որոնցից առանձնապես աչքի ընկավ Ստեփանոս Նազարյանը (1812—1879)։

Նազարյանը ծնվել է Թիֆլիսում՝ քահանայի ընտանիքում։ Նախ կրթություն է ստացել Թիֆլիսի հայկական Ներսիսյան դպրոցում, ապա Դորպատի համալսարանում, ավարտելով պատմա-փիլիսոփայական ֆակուլտետը։ Նա եղել է Կազանի համալսարանի, ապա Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր։ Բացի դիտական և մանկավարժական աշխատանքներից, Նազարյանը գրական-հրապարակախոսական լայն գործունեություն է ծավալել իր խմբագրությամբ լույս տեսնող «Հյուսիսափայլ» (1858—1864) ամսաթերթում։

Նազարյանի նպատակն էր բուրժուականացնել հայկական կյանքը, կապիտալիզմի ուղիով առաջ մղել այն և դրա համար նա կազմում էր զանազան ծրագրեր, նշում առևտուրն ու արդյունաբերությունը զարգացնելու մի շարք միջոցներ, դրանց վրա հրավիրում հայ բուրժուազիայի ուշադրությունը։ Այդ իմաստով, իհարկե, առաջադիմական էր այն պայքարը, որ նա եռանդով մղում էր հայ կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ։

Նա պաշտպան կանգնեց աշխարհաբարին, հայ նոր գրական լեզվին, ընդդեմ գրաբարի, որի մոլի կողմնակիցներն էին հայ ռեակցիոներները։ Ժողովրդի լուսավորության գործը, նոր գաղափարների տարածումը ժողովրդի մեջ կարելի էր առաջ մղել միայն նրան հասկանալի լեզվով։

Այդ պատճառով հասկանալի է, թե ինչու Նազարյանն առաջ քաշեց և պաշտպանեց նաև նոր, աշխարհիկ դպրոցի պահանջը, որի ոչ միայն դասավանդման լեզուն, մանկավարժական սկզբունքները պետք է նոր լինեին, այլև գիտությունները, նրանց բովանդակությունը պետք է հարմարված լիներ կապիտալիզմի զարգացման պահանջներին։

Նազարյանը և «Հյուսիսափայլը» դնում էին նաև հայ եկեղեցու ռեֆորմի հարցը, այսինքն՝ ֆեոդալական եկեղեցին բուրժուական զարգացող կարգերին հարմարեցնելու հարցը։ Բայց եկեղեցու ռեֆորմի հարցը դնելով՝ Նազարյանը դեմ չէր կրոնին։

Ֆեոդալիզմի, նրա տնտեսական ու հասարակական, քաղաքական ու լուսավորական ամբողջ սիստեմի դեմ մղած պայքարում Նազարյանը խիստ չափավոր էր և ռուս լիբերալների նման հեռու էր ժողովրդից, բացասաբար էր վերաբերվում նրա պայքարին։ Ինչպես ռուսական, այնպես էլ հայկական կյանքի վերափոխումն ու զարգացումը բուրժուական հարաբերությունների ուղիով, նա կապում էր ցարական կառավարության, վերևից տրվող ռեֆորմների հետ։

Լինելով լիբերալ-ռեֆորմիստ, Նազարյանը վճռականապես դեմ էր ռեոլյուցիոն պայքարին։ Նրան խորթ էին նաև ցարիզմի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումները։ Նա բացասաբար էր վերաբերվում նաև Միքա-

յել Նալբանդյանի ռևոլյուցիոն գործունեությանը և Գերցենի ու Օգարյովի հետ ունեցած նրա կապերին։

«Հայերս քաղաքական մտքով ռուս ենք»,— ասում էր Նազարյանը։ Նրանք որևէ ազգային-քաղաքական պահանջ չպետք է ունենան և չունեն։ Հայերին ռուսական պետական կյանքի մի անբաժանելի մասնիկը համարելով, նա տարբերություն չէր դնում ցարական ու ժողովրդական Ռուսաստանի միջև. ավելի ճիշտ՝ տեսնում էր միայն ցարական-միապետական Ռուսաստան, դեմոկրատականը նրան խորթ էր և անհասկանալի։

Չնայած այս բոլորին, իր ժամանակի կոնկրետ պատմական պայմաններում, Նազարյանի և նրա խմբագրած «Հյուսիսափայլի» պայքարը հայ իրականության ռեակցիոն ուժերի և գաղափարների դեմ առաջադիմական էր և հենց այդ էր, որ պաշտպանում ու ամենից ավելի բարձր էր գնահատում նշանավոր ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը։

Միքայել Նալբանդյան (1829—1866).— Ռուսաստանում ստեղծված 1850-ական թվականների վերջի և 1860-ական թվականների սկզբի ռևոլյուցիոն իրադրության շրջանի տնտեսական և քաղաքական գաղափարները լայն չափով արտահայտություն գտան Միքայել Նալբանդյանի գործունեության մեջ։ Հայ հասարակական կյանքի հարցերի լուծումը այդ տարիներին նա որոնում էր ռուսական ռևոլյուցիոն շարժման շրջանակներում։ Նա առաջինն էր, որ կարողացավ հասնել ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների գաղափարական մակարդակին և հայ իրականության մեջ սկիզբ դնել ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղղությանը։

Միքայել Նալբանդյանը ծնվել է Նոր-Նախիջևանում (ներկայումս՝ Ռոստով-Դոն քաղաքի պրոլետարական շրջան), արհեստավորի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է տեր Գաբրիել Պատկանյանի դպրոցում։ Տակավին պատանի հասակում նա դուրս է եկել կղերա-ֆեոդալական տարրերի դեմ, որի համար ալածանքի է ենթարկվել։ 1853 թ. նա մեկնել է Մոսկվա և 1855—1859 թթ. սովորել է Մոսկվայի պետական համալսարանում։ 1858 թ. Ստ. Նազարյանի հետ միասին հիմնել է «Հյուսիսափայլ» ամսագիրը։ 1859—1862 թթ. երկու անգամ մեկնել է արտասահման, եղել է Կոնստանդնուպոլսում, Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում։ Արտասահմանում նա անմիջական կապեր է հաստատել արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի՝ Ստ. Ոսկանի, Հ. Սվաճյանի և ուրիշների, ինչպես նաև «Լոնդոնի պրոպագանդիստներ» Ա. Ի. Գերցենի և Պ. Ս. Օգարյովի հետ։

1862 թ. հուլիսին արտասահմանից վերադառնալով Նոր-Նախիջևան, Նալբանդյանը ձերբակալվում է, տարվում Պետերբուրգ և նետվում Պետրոպավլովյան բերդը։

1865 թ. մայիսին Նալբանդյանն աքսորվում է Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, որտեղ և մեռնում է 1866 թ. մարտի 31-ին։

Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական հայացքները կազմակերպվել են 50-ական թվականների վերջերին, ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման ականավոր ղեկավարներ՝ Ն. Չերնիշևսկու, Ա. Գերցենի և Ն. Դոբրոլյուբովի գաղափարական ազդեցության տակ։

Իր մեծ ուսուցիչների նման՝ Մ. Նալբանդյանը հետևողական ռևոլյուցիոն դեմոկրատ էր։ Նա պայքարի դրոշ բարձրացրեց ոչ միայն կղերա-ֆեոդալական ռեակցիայի, այլև բուրժուական լիբերալիզմի դեմ։

Տակավին ուսանողական տարիներին, Նալբանդյանն ակտիվ կերպով մասնակցում էր Մոսկվայի ուսանողների ռևոլյուցիոն շարժումներին։ 1860-ական թվականների սկզբներին նա ռուս ռևոլյուցիոներների հետ լայն գործունեություն էր ծավալում՝ Կովկասում և Ռուսաստանում ժողովրդական ապրուստամբություն նախապատրաստելու ուղղությամբ։

Ականավոր ռևոլյուցիոն գործիչը վճռական պայքար էր մղում ռեֆորմնե-րին կառչող բուրժուական լիբերալիզմի դեմ։ Նա գտնում էր, որ հետագա տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման հարցերը Ռուսաստանում և հայ իրականության մեջ կարող են իրենց լուծումն ստանալ միմիայն ժողովրդական մասսաների ջանքերով։ Չերնիշևսկու նման նա այն համոզմանն էր հանգել, որ գյուղացիությունը կարող է ազատագրվել միմիայն կացնի օգնությամբ։

Հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությունը Նալբանդյանը համարում էր իր կյանքի գործը։ «Երկու տող» պամֆլետի մեջ նա գրում է, որ իր հետապնդած նպատակների կենսագործման համար մղած պայքարից նրան չեն ստիպի հրաժարվել ոչ բանտը, ոչ աքսորը։ Նալբանդյանը հայտարարում է, որ նա հասարակ ժողովրդի իրավունքների համար պայքարելու է ոչ միայն խոսքով ու գրչով, այլև զենքով ու արյունով։

Մերկացնելով ռեակցիոն խավարամոլներին՝ Նալբանդյանն իրեն հատուկ ուղղամտությամբ՝ հայտարարում էր, որ իր գրիչը և անձը նվիրելու է ոչ թե հարուստներին, այլ մերկ ու տկլոր, քաղցած հային։

Եվ իսկապես, իր ամբողջ կյանքով Նալբանդյանն ապացուցեց իր նվիրվածությունը աշխատավոր ժողովրդի շահերին։

Նալբանդյանը լավ էր հասկանում, որ Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիոն պայքարը մեծ նշանակություն ունի ոչ միայն ինքնակալության գարշապարի տակ տանջվող ժողովուրդների, այլև բոլոր երկրների ճզված ու ճնշված աշխատավոր զանգվածների համար։ «Ռուսիո ազատությունը,— ասում է նա,— ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Նալբանդյանը դիտում է որպես Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի բաղկացուցիչ մի մասը։ Նա մերկացնում էր արևմտահայ ռեակցիոներներին, որոնք հայերի ազատագրությունը Թյուրքական լծից ակնկալում էին Ֆրանսիայից կամ մեկ ուրիշ կապիտալիստական պետությունից։ Նալբանդյանը բացատրում էր, որ այդպիսի կողմնորոշումը իրականում հայ ժողովրդի շահերի դավաճանություն է նշանակում, որ դա նպաստում է արևմտաեվրոպական բուրժուական պետությունների ռեակցիոն մտադրությունների և ագրեսիվ պլանների կենսագործմանը Հայաստանի նկատմամբ։

Ամենայն սրությամբ Նալբանդյանը մերկացնում էր կապիտալիստական տերությունների, մասնավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի, գաղութային նենգ քաղաքականությունը։ Արևմտահայերի ազատագրումը նա կապում էր ռուս ռևոլյուցիոն շարժման, ինչպես նաև Եվրոպայի ու Ասիայի ժողովուրդների ազատագրական պայքարի հետ։

Հայ ժողովրդի մեծ զավակը չթուլացող պայքար ծավալեց հայ հասարակության կղերա-ֆեոդալական շրջանների դեմ՝ երևան բերելով նրանց գաղտագարախոսության ռեակցիոն էությունը, պաշտպանելով ժողովրդական լայն

պանգվածների իրավունքները կյանքի բոլոր բնագավառներում։ Աշխարհաբարի, հայ նոր գրականության զարգացման, գիտության և լուսավորության բոլոր հարցերում Նալբանդյանը հանդես էր բերում հետևողական դեմոկրատիզմ՝ առաջ քաշելով արմատական բարեփոխությունների լայն ծրագիր։

Հետևելով Բելինսկուն, Գերցենին, Չերնիշևսկուն և Դոբրոլյուբովին՝ Նալբանդյանը արվեստի, գրականության և գրական քննադատության հարցերը քննարկում էր մատերիալիստական փիլիսոփայության լույսի տակ, ռևոլյուցիոն-դեմոկրատիայի տեսանկյունից։ Նա պնդում էր, որ գրականության և արվեստի կարևորագույն խնդիրն է արտացոլել ռեալ իրականությունը։ Ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատներ Գերցենի ու Չերնիշևսկու նման՝ նա մատերիալիստական դիրքերից քննադատության ենթարկեց Հեգելի իդեալիստական փիլիսոփայությունը։

Հակառակ բուրժուական ու մանր-բուրժուական իդեալիստների՝ Նալբանդյանը ժողովրդի իսկական ազատագրությունը չէր պատկերացնում առանց տնտեսական հարցի վերջնական լուծման։ Նա իր այդ տեսակետը զարգացնում էր հռչակավոր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ, որը լույս տեսավ Փարիզում 1862 թ.։

Ժողովրդի ազատությունը,— ասում էր նա,— կարող է ապահովված լինել միայն այն դեպքում, եթե լուծվի տնտեսական հարցը, որը հայ ժողովրդի համար հանգում է հողի հարցին։ Այն պայմաններում, երբ հողը պատկանում է հասարակության չնչին մասին, ժողովուրդը մնում է ստրկացված և որևէ փոփոխություն սոսկ կառավարման ձևի մեջ չի կարող նրան ազատ դարձնել։

Լինելով ջերմ հայրենասեր՝ Նալբանդյանը անհաշտ պայքար էր մղում նացիոնալիզմի և դաղութարար պետությունների գիշատիչ քաղաքականության դեմ։

Հենվելով ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատական մատերիալիստական փիլիսոփայության վրա, Նալբանդյանը ճշտորեն բացահայտել ու իմաստավորել է տնտեսական ու հասարակական կյանքի բազմաթիվ երևույթները։ Սակայն, նրան, ինչպես և ռուս մեծ ռևոլյուցիոն դեմոկրատներ՝ Չերնիշևսկուն, Գերցենին և ուրիշներին, չհաջողվեց այն ժամանակվա Ռուսաստանի և Հայաստանի հետամնացության հետևանքով բարձրանալ, հասնել մինչև Մարքսի և Էնգելսի դիալեկտիկական մատերիալիզմը։ Այսպես, օրինակ, նա այն ուտոպիական միտքն է արտահայտել, որ, կիրառելով հավասար հողօգտագործման սկզբունքը, կարելի է վերջ տալ կապիտալիստական շահագործմանը և սոցիալական անհավասարությանը։

Մ. Նալբանդյանի գործունեությունը չէր սահմանափակվում Արևելյան Հայաստանի շրջանակներով։ Նրա ղեկավարությամբ զարգանում էր ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժումը նաև արևմտահայերի մեջ։ Նա խորտակիչ հարվածներ հասցրեց ինչպես Արևելյան Հայաստանի կղերա-ֆեոդալական ռեակցիային ի դեմս Գ. Այվազովսկու, այնպես էլ արևմտահայ հետադիմականներին, մասնավորապես նրանց պարագլուխներից մեկին՝ Զամուռճյանին։ Նալբանդյանն ու նրա կողմնակիցները՝ Ստեփան Ոսկան, Հարություն Սվաճյան և ուրիշներ, գլխավորեցին արևմտահայերի ազատագրական շարժումը XIX դ. 50—60-ական թվականներին։

Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական գործունեությունը մեծ դեր կատարեց հայ հասարակական կյանքում։ Նրա վճռական պայքարը կղերա-

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ֆեոդալական ռեակցիայի և բուրժուական լիբերալիզմի դեմ խոր ազդեցություն ունեցավ դեմոկրատական գաղափարների հետագա զարգացման վրա Հայաստանում։ Նալբանդյանը հայ նախամարքսյան մատերիալիստական մտքի խոշորագույն ներկայացուցիչն էր։

Կղերա-ֆեոդալական հոսանքը.— Այս հոսանքի ներկայացուցիչները ֆեոդալական հարաբերությունների և հայ եկեղեցու մոլի պաշտպաններն էին։ Նրանք ամուր կառչած էին հնին և ամեն կերպ արգելակում էին հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացմանը։

Կղերա-ֆեոդալական հոսանքի կողմնակիցները արևելահայերի մեջ ամուր հենարան ունեին հանձին ցարիզմի, որի աջակցությանը շարունակ դիմում էին իրենց հակառակորդների դեմ պայքարելու համար, իսկ արևմտահայերի մեջ՝ սերտորեն կապված էին սուլթանական կառավարության հետ և վայելում էին նրա հովանավորությունը։

Ռեակցիոն այդ հոսանքը 1850—1860-ական թվականներին ուներ մի քանի պարբերական հրատարակություններ և ամեն կերպ ճգնում էր պաշտպանել իր տիրող դիրքերը հայ հասարակական կյանքում։

Մոսկվայում Լազարյան ճեմարանի կրոնի դասատու Մսեր Մսերյանի խմբագրությամբ հրատարակվում էր «Ճռոսքաղը» (1858—1862)։ Նույն տեղում Մսեր և Զարմայր Մսերյանները հրատարակում էին «Համբավարեր Ռուսիո» (1861—1864) պարբերականը։

Թեոդոսիայում Դաբրիել վարդապետ Այվազովսկու խմբագրությամբ հայերեն և ռուսերեն լույս էր տեսնում «Մասյաց Աղավնի» և «Ավետաբեր Հայաստանյաց» (1854—1865) թերթերը։

Իսկ Թիֆլիսում 1858—1862 թթ. Ստ. քահ. Մանգինյանը հրատարակում էր «Մեղու Հայաստանին», որ 1863 թվականից անցավ Պետրոս Սիմոնյանին և դարձավ հայ պահպանողականների օրգանը։

Հայ ֆեոդալական ռեակցիայի և կղերականության գաղափարախոսները իրենց պարբերական հրատարակություններում խավարամիտ արշավանքներ էին գործում աշխարհաբար լեզվի դեմ, անձեռնմխելի հայտարարելով գրաբարը՝ իբրև կրոնի, դպրոցի և գրականության միակ լեզու։

Գրաբարի հետ միասին հայ կղերա-ֆեոդալական ռեակցիայի տիրապետության կարևորագույն կուվանը հայ եկեղեցին էր, հասարակական-լուսավորական կյանքում ունեցած իր ղեկավար դերով։ Այդ պատճառով էլ հայ ռեակցիոներները բոլոր միջոցներով ջանում էին լռեցնել հայ լիբերալներին, մասնավորապես «Հյուսիսափայլի» հրապարակախոսներին, երբ նրանք հայ եկեղեցու ռեֆորմի հարցն էին առաջ քաշում, այսինքն՝ դնում էին այն հարցը, որ անհրաժեշտ է եկեղեցին հարմարացնել զարգացող բուրժուական հարաբերություններին։

Բացի հայկական կյանքի ներքին հարցերից, հայ կղերա-ֆեոդալական ռեակցիայի գաղափարախոսները իրենց դասակարգային գիծը մոլի կերպով պաշտպանում էին այն տնտեսական-քաղաքական հարցերում, որոնք համառուսական մասշտաբով հրապարակ էին քաշվում ռևոլյուցիոն իրադրության պայմաններում։

Այդ հարցերից էին ճորտատիրական իրավունքի վերացման և ցարիզմի լծի տակ ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների հարցերը։ Եվ մեկ, և մյուս հարցում հայ ռեակցիոներները ցարիզմի հետ էին։

Նրանց մամուլը ցարական գյուղացիական ռեֆորմի համոզված պաշտպանն էր և թշնամաբար էր վերաբերվում գյուղացիական շարժումներին։

Նույնպիսի վճռականությամբ այդ մամուլը պաշտպանում էր ցարիզմի ազգային ճնշման քաղաքականությունը և ողջունում նրա հաղթանակը Լեհաստանի 1863 թ. ապստամբությունը ճնշելու գործում։

Հայ ռեակցիոներները խիստ թշնամաբար էին վերաբերվում հատկապես հայ ռևոլյուցիոն-դեմոկրատների ազգային-ազատագրական ծրագրերին և գործունեությանը։ Մասնավորապես նրանք ատելությամբ էին լցված դեպի Միքայել Նալբանդյանը, որն իր համախոհների հետ մեկտեղ, անողոք կերպով մերկացնում էր նրանց հակաժողովրդական դերը, նրանց գործի ու գաղափարների ռեակցիոն էությունը։

4. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պայքար «Ազգային սահմանադրության» համար.— Սուլթանական Թյուրքիայի ռազմա-ֆեոդալական կարգերի նեխումն ու քայքայումը և թյուրք ժողովրդի մեջ աճող դժգոհությունները մի կողմից, սուլթանական դեսպոտիզմի ծանր լծի տակ հեծող հույների, սերբերի, բուլղարների, հայերի ու մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի աշխուժացումը մյուս կողմից, հարկադրում են թյուրքական կառավարությանը ռեֆորմներ անցկացնել երկրում։

Փարիզի հաշտության նախօրեին՝ 1856 թ. փետրվարի 18-ին սուլթան Աբդուլ Մեճիտը հրապարակում է Խաթթը Հումայուն կոչվող թանզիմաթը, որով ընդհանուր բարեփոխություններից բացի, քրիստոնյաներին խոստանում էր կրոնի ազատություն, իրավունքների հավասարություն, պետական հիմնարկներում աշխատելու, դատարաններում վկայություն տալու իրավունք։

Այս ռեֆորմները, որոնք գերազանցապես ժողովրդին խաբելու, մասսայական դժգոհությունները կանխելու միջոց էին և փաստորեն մնացին թղթի վրա, այնուամենայնիվ օբյեկտիվորեն որոշ չափով նպաստեցին Թյուրքիայի հակաֆեոդալական պրոգրեսիվ ուժերի զարդացմանը և ճնշված ժողովուրդների հասարակական-քաղաքական գործունեության մասնակի աշխուժացմանը։ Դրանք այս կամ այն չափով նպաստավոր պայմաններ ստեղծեցին նաև արևմտահայ դեմոկրատական տարրերի գործունեության համար։

Մինչ այդ, արևմտահայերի ազգային ներքին կյանքի ղեկավարությունն ամբողջապես գտնվում էր Կոնստանդնուպոլսի պատրիարքարանի և հայ ամիրաների (հարուստների) ձեռքում։ Դեմոկրատական տարրերը զրկված էին ազգային գործերին մասնակցելու հնարավորությունից։

Արևմտահայերի մեջ, հատկապես Կոստանդնուպոլսում, որտեղ կենտրոնացած էին հայ հասարակական-քաղաքական և կուլտուր-կրթական հաստատությունները, սուր կերպարանք էին ստացել կրոնա-դավանաբանական վեճերը լուսավորչական, կաթոլիկ և բողոքական համայնքների միջև։ Անիմաստ սխոլաստիկ այդ վեճերը, որոնք ամեն կերպ հրահրվում էին սուլթանական կառավարության ու եվրոպական գաղութարար պետությունների կողմից, շատ էին վնասում արևմտահայ դեմոկրատիայի դասակարգային և ազատագրական պայքարին։

Բայց, չնայած դրան, Կոստանդնուպոլսի էսնաֆները (արհեստավորները) կատաղի պայքարի, մասսայական բողոքների ու ցույցերի միջոցով կարողա-

ցել էին որոշ իրավունքներ նվաճել ազգային գործերին մասնակցելու համար։ 1841 թվականին նրանք կազմել էին 27 հոգուց բաղկացած մի մարմին, որը մասնակցում էր ազգային գործերի տնօրինությանը։ 1844 թվականին Ազգային ժողովի 30 անդամներից 16-ը ամիրաներից էին, 14-ը՝ արհեստավորներից։ 1858 թվականին Գերագույն ժողովի 20 անդամներից ամիրաներ էին միայն 6-ը, իսկ մնացած 14-ը ժողովրդից էին։ Կոնստանդնուպոլսի Լսնաֆները, դեմոկրատական մյուս խավերի հետ միացած, համառ պայքարի միջոցով երբեմն կարողանում էին նույնիսկ տապալել իրենց հակառակորդ ամիրաներին և պատրիարքներին։

1840—1850-ական թվականներին Արևմտյան Եվրոպայում կրթություն ստացած և բուրժուա-դեմոկրատական գաղափարներով տոգորված մի խումբ հայ երիտասարդներ կանգնելով դեմոկրատական շարժման գլուխ, նոր թափ են հաղորդում ամիրաների ու կղերականների դեմ մղվող պայքարին։ Այդ պայքարում ամիրաները հետզհետե կորցնում են իրենց գերիշխող դիրքերը, իսկ դեմոկրատական տարրերի ազդեցությունը ուժեղանում է։

Մինչ այդ, Կոնստանդնուպոլսում գործող Հոգևոր և Գերագույն ժողովները չունեին և ոչ մի կանոնադրություն։ Այդ ժողովները, ինչպես և պատրիարքը, գործում էին սուլթանական կառավարությանը մոտ կանգնած ազդեցիկ ամիրաների թելադրությամբ։ Նման դրությունն այլևս հանդուրժել չէր կարելի։ 1857 թվականին Գերագույն ժողովի հանձնարարությամբ «Ուսումնական խորհրդի» մի խումբ անդամներ՝ Նահապետ Ռուսինյան, Նիկողոս Պալյան, Գրիգոր Օտյան, Սերոբե Վիշենյան (Սերվիշեն) և ուրիշներ, մշակում և Ընդհանուր ժողովին հաստատության են ներկայացնում Թյուրքիայի տիրապետությունտակ գտնվող հայերի ներքին գործերի վերաբերյալ մի Կանոնադրություն (Սահմանադրություն), որը, սակայն, մի քանի ամիս հետո սուլթանի կողմից արգելվում է՝ ամիրաների ու հոգևորականների բողոքների հիման վրա։

1857—1860 թթ. սահմանադրության կողմնակիցների ու հակառակորդների միջև մղվող պայքարը ավելի է սրվում։ Արևմտահայ մամուլը լայնորեն արձագանքում է այդ պայքարին։ Նշանավոր դեմոկրատ Հարություն Սվաճյանի «Մեղուն» և պրոգրեսիվ ուղղության պատկանող այլ թերթեր, ակտիվ կերպով պաշտպանում էին սահմանադրությունը, որպես ռեակցիոն ուժերի դեմ մղվող պայքարի մի միջոց։

«Մեղուն» մերկացնում էր պատրիարքների ու ամիրաների կամայականությունները ու բռնությունները հասարակ ժողովրդի նկատմամբ և պահանջում էր Ազգային ժողով հրավիրել, գաղտնի, ընդհանուր քվեարկությամբ ազգային օրինավոր կառավարություն կազմել։ «Ժողովուրդը արդեն շատուց ձանձրացած է,— գրում է Սվաճյանը,— իրենց հարստության ուժով իշխանություն բանեցնելու ելնող անձերուն վարմունքեն, այլև անոնց հարստահարություններեն ու անիրավություններեն հոգին ալ բերանն է եկած»։

1860 թ. մայիսի 24-ին նույն գործիչները այդ Կանոնադրությունը որոշ փոփոխությունների ենթարկելով, վերստին ներկայացնում են Ընդհանուր ժողովի հաստատմանը։ Այս անգամ նրանց հաջողվում է տապալել ամիրաների պաշտպան պատրիարքին, որից հետո Ընդհանուր ժողովը հաստատում և նոր պատրիարքը վավերացնում է «Ազգային Կանոնադրությունը»։ Ահա այդ Կանոնադրությանն է, որ նրա հեղինակներից մեկը՝ Ն. Ռուսինյանը, տալիս է «Ազ-

գային Սահմանադրություն» մեծադղորդ անունը և այդպես էլ նա այնուհետև կոչվում է։

1863 թ. մարտի 17-ին, երկար ձգձգումներից ու փոփոխություններից հետո (Կանոնադրության 150 հոդվածից թողնվում է 99-ը), սուլթանական կառավարությունը հարկադրված վավերացնում է «Ազգային Սահմանադրությունը», որից հետո նա գործադրության իրավունք է ստանում։

«Ազգային Սահմանադրության» դերն ու նշանակությունը։— «Ազգային Սահմանադրության» համաձայն կազմվում են «Ազգային կամ Երեսփոխանական (ներկայացուցչական) ժողով (օրենսդիր մարմին), կրոնական և քաղաքական ժողովներից կազմված, Ազգային Կենտրոնական Վարչություն (գործադիր մարմին), Ուսումնական, Տնտեսական և Դատաստանական խորհուրդներ։

Այսպիսով, արևմտահայ դեմոկրատական տարրերին հաջողվում է, համառ պայքարի շնորհիվ, ամիրաներին ու պատրիարքին զրկել ազգային գործերի կառավարման մենաշնորհ իրավունքից, «ազատելով ազգը,— ինչպես Մ. Նալբանդյանն է ասում,— մի քանի բռնակալ թշվառականների լծից»։

«Ազգային Սահմանադրությամբ» կյանքի կոչված վերոհիշյալ օրգանները, իհարկե, դեմոկրատական իշխանության օրգաններ չէին։ Սուլթանական կարգերում այդպիսի բան չէր էլ կարող լինել։ Ավելին. նրանք ոչ միայն չէին պաշտպանում օտար ու ազգային կեղեքիչների լծի տակ ճնշվող ժողովրդի շահերը, չէին մտահոգվում գյուղացիների ծանր դրությունը թեթևացնելու մասին, այլև, իրենց հերթին, բռնություններ էին գործադրում աշխատավոր մասսայի նկատմամբ։

Սուլթանական բռնապետության լծի տակ գտնվող հայ ժողովրդի շահերը պաշտպանելու գործում «Ազգային Սահմանադրությունը» փաստորեն իրական ոչ մի արժեք չուներ։ Ինչպես ճիշտ կերպով գնահատել է միջազգային իրավունքի մասնագետ Ռոլեն Ժեկմենը, այս «Սահմանադրության» մեջ ոչ մի տեղ լուրջ երաշխավորություն չկար հայ ազգի ո՛չ ընդհանուր և ո՛չ էլ անհատական իրավունքների մասին։ Չկար մի կետ, որը հային պաշտպաներ սուլթանական կառավարության ճնշումներից, թյուրք փաշաների ու քուրդ բեկերի կամայականություններից ու կողոպուտներից։ «Սահմանադրության իրավունքները,— ասում է նա,— դադարում են այնտեղ, որտեղ սկսվում են պետության իրավունքները»։ Հայ նշանավոր ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը. քննադատելով «Ազգային Սահմանադրությունը» ասում է. «Դա մի անուն է, որ անիմաստ է թե՛ հայ ազգի և թե՛ այս Կանոնադրության իսկ վերաբերմամբ»։

Սակայն, չնայած իր չափավոր, նեղ ու սահմանափակ բովանդակությանը. արևմտահայ համայնքի ներքին գործերին վերաբերող այս Կանոնադրությունը մեծ դժվարությունների էր հանդիպում սուլթանական կառավարության կողմից։ Հաճախակի արգելվում էր նրա գործադրությունը, իսկ գավառներում դրեթե չէր էլ գործադրվում, և ինչպես իր ժամանակին Թյուրքիայի մեծ վեզիր Ալի փաշան է ասել, նա դարձել էր «քառակուսի անիվ» ու տեղից չէր շարժվում։

Այս բոլորով հանդերձ, XIX դարի 50—60-ական թվականներին, սուլթանական բռնակալության ծանր պայմաններում, արևմտահայերի մեջ սկսված, այսպես կոչված, «սահմանադրական» շարժումը, իր էությամբ պրոգրեսիվ շարժում էր և դրական նշանակություն ունեցավ արևմտահայերի ազգային ինքնա-

գիտակցության բարձրացման, նրանց հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացման համար։

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը.— Մարաշից հյուսիս, Տավրոս լեռներում ընկած Զեյթունը կամ Ուլնիան Կիլիկիայի երբեմնի հայկական թագավորության գավառներից մեկն էր։ Կիլիկյան թագավորության անկումից հետո զեյթունցիք, կտրված մայր երկրից, ապրում էին համայնական կյանքով, փակ բնատնտեսության պայմաններում։

Զեյթուն գյուղաքաղաքը և իր շրջակա տասս գյուղերը զոնվում էին կիսանկախ վիճակում։ Նրանք տարեկան մի որոշ քանակությամբ միայն հարկ էին վճարում սուլթանական կառավարությանը։

Տավրոսի լեռներում և կիրճերում ապրող շուրջ երեսուն հազար ազատասեր հայերի այսօրինակ վիճակը դուր չէր գալիս սուլթանական կառավարությանը և հատկապես Մարաշի փաշաներին։ XVIII դարի երկրորդ կեսից սկսած՝ բազմաթիվ փորձեր էին կատարվել զեյթունցիներին զրկելու իրենց կիսանկախ վիճակից և ծանր հարկեր դնելու նրանց վրա։ Բայց այդ բոլոր փորձերը, հանդիպելով ուժեղ դիմադրության, ձախողվել էին։

Ղրիմի պատերազմից հետո, երբ Կովկասից մեծ թվով չերքեզներ գաղթեցին Թյուրքիա, Մարաշի Խուրշիդ փաշան փորձեց նրանց մի մասին բնակեցնել Զեյթունում։ Զեյթունցիները դիմադրեցին և ստիպեցին փաշային հրաժարվել իր այդ քայլից։

1862 թվականին Մարաշի կառավարիչ Ազիզ փաշան պահանջում է զեյթունցիներից՝ վճարել մի քանի տարվա հարկերը։ Զեյթունցիք ի վիճակի չլինելով այդչափ հարկ վճարել, ապստամբվում են և մերժում փաշայի պահանջը։ Օգտագործելով այս առիթը, ինչպես և թյուրքերի ու հայերի միջև հողային հարցի շուրջը ծագած վեճերը, 1862 թ. հուլիսին Ազիզ փաշան ավելի քան տասս հազար զորքով և բազմաթիվ բաշիբոզուկներով հարձակվում է Զեյթունի վրա, ավերում ու այրում է մի քանի գյուղեր, կոտորում խաղաղ բնակիչներին։ Օգոստոսի 2-ին թյուրքական զորքերը պաշարում են Զեյթունը։

Պաշարելով Զեյթունը, Ազիզ փաշան զեյթունցիներից պահանջում է հանձնել իրենց զենքերը և ղեկավարներին։ Զեյթունցիները մերժում են նրա պահանջը և դիմում են ինքնապաշտպանության։ Օգոստոսի 14-ի առավոտյան Ազիզ փաշայի զորքերը և նրան օգնության եկած հրոսակախմբերը մի քանի ուղղությամբ դրոհում են Զեյթունի վրա։ Անվեհեր զեյթունցիք, այդ թվում կանայք և ծերեր, միահամուռ ուժերով կանգնում են թշնամու դեմ և հերոսական դիմադրություն ցույց տալիս նրան։

Օգոստոսի 14-ի ամբողջ օրը Զեյթունի մատույցներում կատաղի մարտեր են տեղի ունենում։ Մի բուռ զեյթունցիներ արիաբար հետ են մղում թյուրքական զերազանց ուժերի բոլոր դրոհները և ծանր կորուստներ պատճառում նրանց։ Զեյթունցիներից շատերը քաջության ու խիզախության օրինակ են ցույց տալիս և հերոսի մահով ընկնում այդ մարտերում։

Երիտասարդ հայրենասեր Մարկոս Թաշճյանը, տեսնելով, որ հակառակորդի մի թնդանոթը շատ է վնասում իրենց, որոշում է անցնել թշնամու դիրքերը և ոչնչացնել թնդանոթաձգին։ Երբ ընկերները փորձում են թույլ չտալ, ասելով, «Անմիտ մեռնելու կերթաս», Թաշճյանը պատասխանում է. «Այո, գիտեմ պիտի մեռնիմ, բայց ուրիշները պիտի ապրեցնեմ»։ Թաշճյանն անց-

նում է թշնամու բանակը, սողալով մոտենում է թնդանոթաձգին, սպանում նրան, բայց ինքն էլ հերոսի մահով ընկնում է թշնամու գնդակից։

Օգտագործելով Զեյթունի բնական պայմանները, զեյթունցիք դիմում են ռազմական խորամանկության և թակարդ սարքում հակառակորդի համար։ Հինգ հարյուր քաջ զեյթունցիներ նետվում են թյուրքական զորքերի վրա և որոշ ժամանակ կռվելուց հետո, դիտավորյալ փախչում են Զեյթունի ձորը, որտեղ երկու կողմից գիրք մտած նրանց ընկերները սպասում էին թշնամուն։ Եվ երբ իրենց «հաղթանակով» ոգևորված թյուրքական զորքերը, հետապնդելով փախչող հակառակորդին, լցվում են այդ ձորը, զեյթունցիք երկու կողմից սկսում են կրակ տեղալ և քարեր գլորել նրանց վրա։ Ծուղակի մեջ ընկած թյուրքերը, ավելի քան 730 մարդ կորցնելով, հազիվ են կարողանում փախչել այդ ձորից։ Զեյթունցիք այդ ձորն անվանում են «Կոտորածի ձոր»։

Ազիզ փաշայի զորքերը ծանր պարտություն կրելով խուճապահար փախչում են, թողնելով իրենց ունեցած երկու թնդանոթները, զենք և ռազմամթերք։

Սուլթանական կառավարությունը տեղեկանալով զեյթունցիների տարած հաղթանակի մասին, որոշում է մեծ թվով զորքեր ուղարկել Զեյթուն և պատժել զեյթունցիներին։ Բայց հետագա դեպքերը կանխում են այդ նոր արշավանքը։

Զեյթունի վերնախավի ներկայացուցիչները Կոնստանդնուպոլսում դիմում են Ֆրանսիայի Հովանավորության տակ գտնվող կաթոլիկ հայերի առաջնորդ Անտոն արքեպիսկոպոս Հասունյանին և ստիպված համաձայնում են, Ֆրանսիայի օգնության դեպքում, կաթոլիկություն ընդունելու նրա պահանջին։

Սուլթանը և Կոնստանդնուպոլսի հայ պատրիարքը վախենալով մի կողմից հայ ժողովրդի նոր հուզումներից, իսկ մյուս կողմից զեյթունցիների կաթոլիկություն ընդունելու և Ֆրանսիայի ազդեցության տակ ընկնելու վտանգից, դիմում են կոմպրոմիսի։

Զորքի փոխարեն խառն քննիչ հանձնաժողով է ուղարկվում Զեյթուն և փոխադարձ զիջումներով հաշտություն է կնքվում։ 1861 թվականից Զեյթունում նշանակվում է թյուրք կառավարիչ (գայմակամ)։ Զեյթունցիք զրկվում են իրենց նախկին կիսանկախ վիճակից և պարտավորվում են հարկ վճարել։ Նրանց վերապահվում են որոշ սահմանափակ իրավունքներ միայն՝ իրենց համայնական և եկեղեցական ներքին գործերը վարելու համար։

Զեյթունի ապստամբության պատմական նշանակությունը.— Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը հայ ազատագրական շարժման փառավոր դրվագներից մեկն է։ Մեծ է եղել այդ ապստամբության նշանակությունը ոչ միայն արևմտահայերի, այլև արևելահայերի ազգային գիտակցության բարձրացման, նրանց ազատագրական շարժումների հետագա զարգացման համար։ Զեյթունի գյուղացիության հերոսական օրինակը երկար տարիներ ոգեշնչել և ազատագրական պայքարի է մղել հայ ժողովրդին։ Այս տեսակետից արևմտահայ իրականության մեջ ազգային-ազատագրական ոչ մի շարժում այնքան մեծ դեր չի խաղացել, որքան Զեյթունի ապստամբությունը։

Պատահական չէ, որ հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը և նրա արևմտահայ հետևորդները ջերմորեն պաշտպանում էին զեյթունցիների ազատագրական պայքարը։ Մի շարք փաստեր ցույց են տալիս, որ Կոնստանդնուպոլսում Մ. Նալբանդյանի նախաձեռնությամբ հիմնված է եղել գաղտնի ռևոլյուցիոն կազմակերպություն, արևմտահայ աշխատավորության մեջ աշխատանք տանելու համար։ Այդ կազմակերպության

ղեկավար Հարություն Սվաճյանը և Ս. Թագվորյանը, ինչպես և Նալբանդյանի համակիրներ Հ. Շիշմանյանը (Մերենց), Մ. Պեշիկթաշլյանը և ուրիշները կապ են պահպանել Զեյթունի հետ, դրամ և մարդիկ են ուղարկել այնտեղ։ Իր արևմտահայ բարեկամների միջոցով Նալբանդյանը կապ էր հաստատել նաև իտալական ազգային-ազատագրական շարժման ականավոր ղեկավարներ Մաձինիի և Գարիբալդիի հետ։

Հայ դեմոկրատ բանաստեղծ Սմբատ Շահազիզը Զեյթունի ապստամբությունը համարել է «հայկական քաջասրտության փառավոր ապացույց» և գովերգել է զեյթունցիների ազատագրական պայքարը։ «Եզուիտներ և Զեյթուն» բանաստեղծության մեջ նա խանդավառ տողեր է դրել զեյթունցիների մասին։

Նշանավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը ևս իր մի շարք բանաստեղծություններում դրվատել է զեյթունցիների հայրենասիրությունն ու ազատասիրությունը։

Լինելով ժողովրդա-ազատագրական առաջին խոշոր ընդվզումը թյուրքական բռնակալության դեմ, Զեյթունի ապստամբությունը միշտ քաջության, ազատասիրության ու հայրենասիրության կենդանի օրինակ է հանդիսացել։ Իզուր չէ, որ հայ ժողովուրդը այնքան բարձր է գնահատել զեյթունցիների սխրագործությունները և միշտ վառ պահել նրանց հիշատակը։

Վեցերորդ գլուխ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1870—1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1870 ԹՎԱԿԱՆԻՆ

Ռեֆորմի նախապատրաստումը.— 1861 թ. փետրվարի 19-ին Ռուսաստանում ճորտատիրական իրավունքը վերացնելուց հետո ցարական կառավարությունը միջոցներ ձեռնարկեց կիրառելու գյուղացիական ռեֆորմը նաև Անդրկովկասում։ Ցարիզմը չէր կարող իր այդ գաղութում անփոփոխ թողնել ֆեոդալական-ճորտատիրական կարգը։ Անդրկովկասում ևս տնտեսական զարգացման ուժը մղում էր երկիրը դեպի կապիտալիզմը։ Այդտեղ էլ ճորտատիրական հարաբերությունների դեմ ըմբոստանում էր գյուղացիությունը, որի համար, դրամական տնտեսության զարգացման պայմաններում, անտանելի էր դառնում կալվածատիրական շահագործումը։

Ռուսաստանից անմիջապես հետո ռեֆորմ անցկացվեց Վրաստանում։ 1864 թ. հոկտեմբերի 13-ին «ազատագրվեցին» Թիֆլիսի նահանգի, իսկ մեկ տարի հետո Քութայիսի նահանգի ճորտերը։

Ցարիզմը ամեն կերպ ընդառաջեց Վրաստանի ազնվականությանը։ Այստեղ ևս «ազատագրությունը» խիստ ծանր ու աննպաստ եղավ գյուղացիության համար։

Հայաստանում և Ադրբեջանում ռեֆորմը նախապատրաստելու համար Երևանում, Բաքվում և Գանձակում ստեղծվեցին, այսպես կոչված, բեկական հանձնաժողովներ։ Այդ հանձնաժողովները պետք է որոշեին, թե կալվածատերերից որոնց պետք է ճանաչել լայն իրավունքներ ունեցող ազնվականներ՝ «բարձր դասին» պատկանող մարդիկ։ 1866 թ. կազմակերպվեց Երևանի բե-

կական հանձնաժողովը նահանգապետի նախագահությամբ։ Նույնպիսի հանձնաժողովներ ստեղծվեցին Բաքվում և Գանձակում։

Երևանի բեկական հանձնաժողովը, որ իր աշխատանքները վերջացրեց մոտ մեկ տարում, որոշում ընդունեց այն մասին, որ ամբողջ նահանգի կալվածատերերից «բարձր դասին» են պատկանում 282 տոհմ։

Շատ կեղծիքներ կատարվեցին այդ հանձնաժողովում։ Կալվածատերերը կաշառքի ու կեղծ միջոցով «բարձր դասի» շարքերն ընկան և ապահովեցին իրենց ճորտատիրական-կալվածատիրական իրավունքները գյուղացիության վրա։ Գյուղացիները բողոքներ և գանգատներ արեցին, մերկացնելով հանձնաժողովի անդամներին և պահանջելով վերաքննել նրա որոշումները։ Գյուղացիների բողոքները, իհարկե, մնացին անհետևանք և ցարիզմը Հայաստանում ռեֆորմը նախապատրաստեց իր ռեակցիոն, հակագյուղացիական քաղաքականության համաձայն, ըստ ամենայնի ապահովելով կալվածատերերի շահերը։ Ռեֆորմի կանոնադրության նախագծի հիմք ճանաչվեցին Նիկոլայ I 1846 թ. դեկտեմբերի 6-ի ճորտատիրական ռեսկրիպտը, որով Հայաստանի և Ադրբեջանի «բարձր դասին» տրված էր կալվածատիրական իրավունք, ապա ռուսական և վրացական կանոնադրությունները, որոնք ունեին կիսաճորտատիրական բնույթ։ Ցարիզմը Հայաստանի և Ադրբեջանի գյուղացիությանը պատրաստվում էր «ազատագրել» նույն սկզբունքներով, ինչ որ ռուսական և վրացական ճորտերին։ Նա ձգտում էր «բարձր դասի» համար ապահովել այն իրավունքները, ինչ որ պահպանվել էին Ռուսաստանի և Վրաստանի ազնվականության համար։

Ցարական չինովնիկների մշակած այդ կանոնագրությունը քննվեց ու խմբագրվեց Պետերբուրգում և ապա 1870 թ. մայիսի 14-ին հաստատվեց Ալեքսանդր II կողմից։

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը.— Մայիսի 14-ի կանոնադրության համաձայն կալվածատիրական գյուղացին իրավունք էր ստանում օգտվելու հողաբաժնից, բայց դրա սեփականատերը համարվում էր կալվածատերը։ Գյուղացին իրեն հատկացրած հողաբաժնի դիմաց պետք է պարհակներ կատարեր կալվածատիրոջ համար։

Հողաբաժնի չափը սահմանվում էր այսպես. 15 տարին լրացած ամեն մի արական շնչին տրվելու էր 5 դեսյատին հող։ Բայց կալվածատերն իրավունք ուներ իր հողերի 1/3-ը իրեն պահելու։ Այդ կանոնի համաձայն առաջին հերթին, իհարկե, բավարարվում էր կալվածատերը, դրա հետևանքով էլ գյուղացիները սահմանված նորմայով հող երբեք չստացան։

Գյուղացիների հողաբաժնի մեջ չէր մտնում անտառը, այն մնում էր կալվածատիրոջը, որին էին թողնվում նաև առևտրի և շուկայի համար օգտագործվող հրապարակները։Արոտատեղերը նույնպես թողնվում էին կալվածատերերին։ Չէր լուծվում նաև ջրից օգտվելու հարցը, որը կենսական նշանակություն ուներ գյուղացիության համար։

Յուրաքանչյուր գյուղական ընտանիքին հողաբաժինը տրվում էր մշտական օգտագործման համար և այլևս ենթակա չէր վերաբաժանման։ Այդ նշանակում է, որ ցարիզմը ռեֆորմի ժամանակ վերացրեց Հայաստանի գյուղերի մեծ մասում գոյություն ունեցող համայնական հողօգտագործման ձևը, որի համաձայն գյուղի շրջանակում պարբերաբար տեղի էր ունենում վարելահողի վերաբաժանում գյուղական ընտանիքների միջև՝ ըստ շնչի։

Այդ կարգը ձեռնտու էր գյուղական ունևոր շերտի համար, հեշտացնում էր չքավորների հողաբաժնի հափշտակումը, այդ պատճառով էլ շատ բողոքներ առաջ բերեց գյուղական չքավոր մասսայի կողմից։

Հայաստանում այնուհետև հաստատվեց այն կարգը, որ ամբողջ գյուղը կարող էր հրաժարվել իր օգտագործման տակ եղած ընդհանուր հողաբաժնի միայն $^1/_6$-ից։ Այսպիսով կալվածատերն ապահովվում էր իր հողը մշակող և պարհակներ կատարող բանվորական ձեռքով։ Գյուղացիք փաստորեն ամրացվում էին նրա հողին։

Մայիսի 14-ի կանոնադրության համաձայն երկու տարի, մինչև որ կանոնագրերը կկազմվեին և ուժի մեջ կմտնեին, «ազատագրված» գյուղացիք պետք է շարունակեին նախկին կարգով կալվածատերերի համար կատարել անձնական պարհակներ, այսինքն՝ կոռ, և բացի այդ, վճարել նատուրալ տուրք։ Դրանից հետո կոռը վերացվում էր և դրա փոխարեն մտցվում էր դրամական տուրք, իսկ նատուրալ տուրքը բահրա և մալչեհոթ անուններով, պահպանվեց մինչև 1912 թ.։ Այդ նշանակում էր, որ ֆեոդալական ժամանակաշրջանի այդ պարհակն ամբողջ քառասուն տարի ծանրացած մնաց գյուղացու վրա։ Բանջարանոցներից և բոստաններից, ապա նաև այգիներից գյուղացիք վճարելու էին կալվածատիրոջը դրամական տուրք։ Բացի հողաբաժնի համար սահմանված այդ պարհակներից, գյուղացիք հատուկ վճար էին տալիս կալվածատիրոջը անտառից օգտվելու, ինչպես և իրենց զանազան ձեռնարկությունների, օրինակ՝ ջրաղացների համար և այլն։

Կալվածատիրական պարհակների կատարման համար ամեն գյուղական ընտանիք պատասխանատու էր առանձին-առանձին։ Այդ պարհակները հավաքվում էին նույնպիսի խստությամբ, ինչպես պետական տուրքերը։ Գյուղացիների վրա կուտակված ապառիկների դիմաց կալվածատերը կարող էր գյուղացուն հողաբաժնից զրկել։

Մայիսի 14-ի կանոնադրությունը գյուղացիներին հողաբաժին տալու և նրանց պարհակների ընդհանուր սկզբունքներ սահմանելու հետ մեկտեղ, հաստատում էր նաև դրանց կիրառումը ամեն մի կալվածում, ամեն մի գյուղում։

Այդ նպատակով ամեն մի գյուղի համար պետք է կազմվեր կանոնագիր, որի մեջ պետք է նշվեին կալվածատիրոջ բոլոր պարհակները և այլն։ Այդ գործը հանձնվեց հատուկ պետական չինովնիկների՝ հաշտարար միջնորդների։

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում կանոնագիրը պետք է կազմվեր երկու տարվա ընթացքում, բայց իբրև կանոն, ժամանակին այդ չավարտվեց, և գյուղացիք տարիներ շարունակ ստիպված եղան, գյուղացիական ռեֆորմից հետո էլ, կատարել բոլոր ճորտատիրական պարհակները կալվածատերերի համար իբրև ժամանակավոր պարտապաններ, կամ ժամանակավոր կախյալներ ինչպես սահմանված էր կանոնադրությունների մեջ։

Հաշտարար միջնորդների կազմած կանոնագրքերում կային բազմաթիվ կեղծիքներ։ Կանոնագրերը կալվածատերերին տվեցին գյուղացիներին կեղեքելու և ճնշելու բոլոր հնարավորությունները։

Գյուղացիական ռեֆորմի հիմնական հարցերից մեկը հողի հետգնման հարցն էր։ Մայիսի 14-ի կանոնադրությամբ դրա համար այնպիսի պայմաններ էին նշված, որ իբրև կանոն, Հայաստանի, ինչպես նաև Ադրբեջանի «ազատագրված» գյուղացիությունը մինչև 1912 թ., իսկ փաստորեն մինչև սովետական կարգերի հաստատումը, հնարավորություն չունեցավ հետ դնել կալվածա-

տիրոջից իր հողաբաժինը ու նրա սեփականատերը դառնալ և մնաց կիսաֆեոդալական կախման մեջ։

Ցարական ռեֆորմի համաձայն գյուղացին հող կարող էր ստանալ միմիայն վճարով, կալվածատիրոջից հետ գնելով։ Գյուղացիք թե՛ ընտանիքներով և թե՛ ամբողջ գյուղերով իրավունք ունեին գնել իրենց հողաբաժինը։ Բայց ամեն մի ընտանիք կարող էր գնել ոչ ավելի, քան 15 դեսյատին։

Հողի հետգնման գումարը որոշում էր հաշտարար միջնորդը ամենաբարձր գներով։ Գյուղացիները ի վիճակի չէին իրենց հողաբաժնի համար պահանջվելիք գումարը միանվագ վճարելու կալվածատիրոջը, իսկ հետգնման գործարք կատարելու համար այդ անհրաժեշտ և անխախտ պայման էր։ Այսպիսով, հողի հետգնումը չէր կատարվում, գյուղացին չէր դառնում սեփականատեր, նա շարունակում էր մնալ կիսաճորտական վիճակում։

Գյուղացիական ռեֆորմի նշանակությունը.— Ցարական կառավարությունը Հայաստանում գյուղացիական ռեֆորմն անցկացրեց Ռուսաստանի և Վրաստանի օրինակով։ Բոլոր դեպքերում էլ ամեն բան արվեց, որպեսզի ապահովվեն կալվածատերերի շահերը։ Վ. Ի. Լենինը Ռուսաստանում կիրառված ագրարային ռեֆորմի մասին ասում էր, որ դա ճորտատերերի ձեռքով կենսագործված բուրժուական ռեֆորմն էր, որ չէր կարող կիսատ չլինել և չպահպանել ճորտատիրական տնտեսության և իրավունքի շատ մնացորդներ կալվածատիրոջ օգտին։

Այդ ռեֆորմն, ըստ էության, բուրժուական ռեֆորմն էր, որովհետև, դա ճանապարհ հարթեց Ռուսաստանի կապիտալիստական զարգացման համար թե՛ գյուղատնտեսության և թե՛ արդյունաբերության ասպարեզում։

Հայաստանում փոքր մասշտաբով և որոշ առանձնահատկություններով, բայց հիմնականում նույն գծերով կրկնվեց այն, ինչ որ կատարվել էր Ռուսաստանում։ Այստեղ ևս գյուղացիական ռեֆորմի հետևանքով գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման հնարավորություններ ստեղծվեցին։

Գյուղացիության պայքարը ցարական ռեֆորմի դեմ.— Կիսաճորտատիրական, ըստ էության կալվածատիրական ռեֆորմի դեմ պայքարի ելավ նաև Հայաստանի գյուղացիությունը։

Երբ սկսվեց կիրառվել ռեֆորմը, գյուղացիությունն ըմբոստանում էր դրա դեմ, փորձում էր գիմադրել, չճանաչել ռեֆորմի հետևանքով իր ուսերին ծանրացող բեռը։ Եվ այդ ամենը կատարվում էր այնպիսի սուր ձևերով, որ տեղական իշխանությունը դիմում էր գավառական և նահանգական մարմինների օգնությանը գյուղացիների ըմբոստությունը ճնշելու, նրանց «խաղաղացնելու» համար։

Էջմիածնի գավառի Ջանֆիդա և Կարխուն գյուղերի բնակիչները 1872 և 1873 թթ. արգելում են հաշտարար միջնորդին կանոնագրեր կազմել իրենց գյուղերի համար, իսկ երբ ոստիկանության օգնությամբ կանոնագրերն, այնուամենայնիվ, կազմվում են, հրաժարվում են կալվածատերերին մուլք վճարելուց։ Նույն գավառի Գյոգլու գյուղի բնակիչները 1873 թ. բողոք են ներկայացնում Երևանի նահանգի պետական գույքերի վարչությանն իրենց գյուղի համար կեղծ մուլքադարի անունով կանոնագիր կազմելու և նրա օգտին մուլք պահանջելու համար։ Գյուղացիների ըմբոստությունը ճնշվում է՝ տեղական իշխանությունների միջամտությամբ։

Գյուղացիական պայքարը կալվածատիրական կախումից ազատվելու

համար զանազան ձևեր էր ընդունում։ Սովորական ձևերից մեկն այն էր, որ գյուղացիք հրաժարվում էին որևէ տուրք տալուց, գյուղից դուրս էին վռնդում կալվածատիրոջը և նրա հարկահավաքներին։

Քանի որ կառավարական մարմինները պաշտպան էին կանգնում կալվածատերերին, այդ պատճառով էլ գյուղացիների հակակալվածատիրական ելույթներն ուղղվում էին նաև նրանց դեմ և ստանում հակակառավարական բնույթ։ Գյուղացիք ոչ միայն հրաժարվում էին կալվածատիրոջ իրավունքները ճանաչելուց, նրան տուրք տալուց, այլև չէին ենթարկվում իշխանությանը, նրա կարգադրությունները չէին կատարում։

Այդպիսի բնույթ է ստանում, օրինակ, 1884 թ. Երևանի գավառի Գյոդաքլու և Դալար գյուղերի պայքարն իրենց մյուլքագարների դեմ։ Գյուղացիները նախ հրաժարվում են տուրք վճարելուց մյուլքադարներին, ապա մերժում են նաև ցարական չինովնիկների պահանջը։ Գյուղացիք հայտարարում էին, թե ոչ մի կալվածատիրոջ չեն ճանաչում, թե իրենք բանտ կնստեն, Սիբիր կաքսորվեն, բայց ոչինչ չեն տա կալվածատերերին։

Գյոդաքլու և Դալլար գյուղերի պայքարն իրենց մյուլքադարների լծից ազատագրվելու համար եզակի երևույթ չէր։ Նույնպիսի պայքար տեղի էր ունենում նաև մյուս գյուղերում։

Գյուղացիների պայքարը մղվում էր անջատ-անջատ, ուղղվում էր այս կամ այն կալվածատիրոջ, երբեմն էլ ցարական իշխանության այս կամ այն ներկայացուցչի դեմ և հեշտությամբ ճնշվում էր։ Բայց այդ պայքարը լարված դրության մեջ էր պահում կալվածատերերին և նրանց շահերը պաշտպանող կառավարական օրգաններին։ Այդ պայքարը գյուղի մշտական բողոքի և դժգոհության արտահայտություն էր կիսաճորտատիրական հարաբերությունների դեմ։

1870—1880 թթ. գյուղացիական պայքարը, բացի կալվածատիրոջ և ցարիզմի դեմ ուղղվելուց, հետզհետե սկսում էր ուղղվել նաև գյուղական վերնաշերտի, կուլակների դեմ գլխավորապես գյուղի համայնական հողի ըստ շնչի պարբերաբար վերաբաժանման համար։

Այդպիսի շարժում ծավալվեց, օրինակ, Երևանի գավառի Աղհամզայու, Բեկջազլու և Սարունջի գյուղերում 1870 և 1885 թվականներին, բայց ցարական իշխանությունների միջամտությամբ ճնշվեց այն։

Ցարական կառավարությունն իր պաշտպանության տակ էր առել գյուղական բուրժուազիային, արգելելով հողի վերաբաժանումը։

Ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների մնացորդները հետռեֆորմյան գյուղերում.— Ռեֆորմը չվերացրեց գյուղացու սակավահողությունը, ընդհակառակը, նույնիսկ ուժեղացրեց, որովհետև իբրև կանոն գյուղացին սահմանված չափով հող չստացավ և շատ դեպքերում նրա հողաբաժինը կազմում էր օրենքով նախատեսվածի կեսը, մեկ երրորդը, երբեմն մեկ չորրորդը։

Դրա շնորհիվ գյուղացին ստիպված էր վարձակալել կալվածատիրոջ հողը կիսաճորտատիրական պայմաններով, հաճախ վճարելով նրան բերքի կեսը։ Շատ դեպքերում հողի այդպիսի վարձակալության դիմում էր նաև պետական գյուղացին, ընկնելով կալվածատիրական շահագործման ոլորտը։ Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում գյուղացու կախումը կալվածատիրոջից չէր վերանում։ Գյուղում պահպանվում էին ֆեոդալական-ճորտատիրական հարա-

բերությունների շատ մնացորդները, որոնք ամեն կերպ խանգարում էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։

Պետական բազմատեսակ և ծանր հարկերը, բազմաթիվ պետական աշխատանքային պարհակները գյուղացու տնտեսության զարգացման համար կաշկանդիչ նշանակություն ունեին։

Նույն ձևով էր ազդում գյուղացու տնտեսության վրա նաև ճորտատիրական ժամանակներից պահպանված իրավական կաշկանդանքը՝ համապարտ երաշխավորությանը, որի համաձայն պետական գյուղացիք հարկերի վճարման մեջ համայնքով պատասխանատու էին իրենց ամեն մի անդամի համար, իսկ կալվածատիրական գյուղացիք նույն պարտավորություններն ունեին համայնքի տնօրինության տակ գտնվող հողաբաժինների համար հողատիրոջ հանդեպ։

Ցարական ռեֆորմի պահպանած այս կիսաճորտատիրական հարաբերությունների մեջ էր խճճված գյուղը, որտեղ թեև դանդաղ զարգանում էր նաև կապիտալիստական տնտեսություն։ Այսպիսով կիսաճորտատիրական շահագործման վրա ավելանում էր նաև հետզհետե ուժեղացող կապիտալիստական շահագործումը։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը.— Անդրկովկասում և Հայաստանում հետռեֆորմյան երկու տասնամյակում կապիտալիզմը որոշ հաջողություններ ունեցավ գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ։ Այդ գործում կարևոր նշանակություն ունեցան կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում 1861 թ. ռեֆորմից հետո և այն միջոցառումները, որ ցարիզմը ձեռնարկեց Անդրկովկասում երկաթգիծ անցկացնելու ուղղությամբ։

1870-ական 1880-ական թվականների ընթացքում կառուցվեց Թիֆլիս—Փոթի և Բաքու — Բաթում երկաթուղին, որ կարևորագույն նշանակություն ունեցավ Անդրկովկասը Ռուսաստանի, նաև Եվրոպայի հետ տնտեսապես կապելու համար։ Միաժամանակ կառուցվեցին մի շարք խճուղիներ և այլ ճանապարհներ, որոնք երկրի տնտեսական կյանքի աշխուժացման համար նույնպես նպաստավոր գործոն հանդիսացան։

Ռուսական և Եվրոպական կապիտալը սկսեց մուտք գործել Անդրկովկաս՝ նրա բնական հարստությունները շահագործելու համար։ Ռուսական արդյունաբերական ապրանքների տարածումն ավելի ու ավելի մեծ ծավալ ընդունեց։ Այդ արդյունաբերությունը ոչ միայն իր ապրանքների համար շուկա էր ստեղծում Անդրկովկասում, այլև աշխատում էր երկրի գյուղատնտեսությունը հարմարեցնել իր կարիքներին և այնտեղ իր համար հումքի բազաներ ստեղծել։

Այդպիսի պայմաններում գյուղն ավելի ու ավելի էր ներգրավվում ապրանքային տնտեսության մեջ և կապվում շուկայի հետ։ Կապիտալիստական հարաբերությունները մուտք գործելով գյուղ, քայքայում, շերտավորում էին այն։ Սկսվում էր այն պրոցեսը, որի հետևանքով գյուղում ձևավորվում էր երկու հիմնական շերտ՝ գյուղական կիսապրոլետարական մասսան և գյուղական բուրժուազիան։

Հենց այդ տնտեսական նոր պրոցեսների շրջանում է, որ բավական մեծ ծավալ է ստանում քայքայված գյուղացիության հոսանքը դեպի քաղաքները, գլխավորապես դեպի Բաքու, Թիֆլիս և Բաթում։ Այդ քաղաքներում էր, որ զարգանում էր Անդրկովկասի արդյունաբերության գլխավոր ճյուղերը։

Հայաստանը չուներ Բաքվի, Բաթումի, Թիֆլիսի նման արդյունաբերական կենտրոններ։ Երևանը և Ալեքսանդրոպոլը ոչ միայն 1870-ական, այլև 1890-ական թթ. մնացին հիմնականում մանր արդյունաբերության և առևտրի կենտրոններ։

Հայ առևտրական կապիտալը, որ գտնվում էր գլխավորապես Հայաստանից դուրս՝ Ադրբեջանում և Վրաստանում, շրջադարձ կատարեց դեպի արդյունաբերություն։ Անդրկովկասի կապիտալիստական արդյունաբերության զարգացման մեջ զգալի դեր խաղացին ռուսական և եվրոպական կապիտալիստների հետ միասին նաև հայ կապիտալիստները։

2. 1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում.— 1877 թ. ապրիլին պատերազմ է սկսվում Ռուսաստանի և Թյուրքիայի միջև։ Պատերազմական գործողությունները մղվում էին միաժամանակ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում։ Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի ընդհանուր հրամանատարն էր թագավորի եղբայրը՝ Միխայիլ Նիկոլաևիչը, իսկ Կարսի ուղղությամբ գործող կորպուսի հրամանատարն էր գեներալ Լորիս-Մելիքովը։ Կովկասյան ճակատում ռուսական գործող բանակը կազմված էր 70 հազար մարդուց, իսկ թյուրքականը՝ 55 հազար։ Թյուրքական զորքերի գլխավոր հրամանատարն էր Մուխտար փաշան։

Չնայած նրան, որ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թյուրքիայի համար Կովկասյան ռազմաճակատը օժանդակ նշանակություն ուներ՝ այնուամենայնիվ մարտական գործողությունները երկու կողմերի միջև ավելի լայն ու ավելի սուր բնույթ ստացան, քան նախորդ ռուս-թյուրքական պատերազմների ժամանակ։

Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը ապրիլի 12-ին հարձակման անցան երեք ուղղությամբ՝ Ալեքսանդրոպոլ — Կարս, Իգդիր — Բայազետ և Ախալցխա — Արդահան։

Պատերազմի հենց սկզբից ռուսական զորքերը աչքի ընկնող հաջողություններ ունեցան և հարկադրեցին հակառակորդին հրաժարվել իր հարձակողական պլաններից ու անցնել պաշտպանության։

Ապրիլին Երևանյան ջոկատի զորքերը գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ առանց կռվի մտան Հին Բայազետ, իսկ հետո գրավեցին Դիադինը, Ալաշկերտը և Զեյդեկանը։ Այս շրջանների բնակիչները, որոնք մեծամասամբ հայեր էին, ցնծությամբ դիմավորեցին ռուս զորքերին։ Մայիսի 5-ին ռուսական քաջարի զորքերը գրոհով վերցրին Արդահանը, որը թյուրքերը ամրացրել էին անգլիական ռազմական ինժեներների ղեկավարությամբ։

Հաջողությամբ շարունակելով հարձակողական մարտերը, հունիսի սկզբներին, գեներալ Տեր-Ղուկասովի ջոկատը փայլուն հաղթանակներ է տանում հակառակորդի թվով մի քանի անգամ գերազանց ուժերի դեմ Դրամ-Դաղի ու Գահարի ճակատամարտերում։ Հունիսի կեսերին կենտրոնական ճակատում գեներալ Գեյմանի կրած պարտության և նահանջի կապակցությամբ, Տեր-Ղուկասովը հրաման է ստանում նահանջելու։ Այդ դժվարին խնդիրը նա կա-

տարում է, օրինակելի կարգապահությամբ, թշնամու օղակման վտանգից դուրս բերելով իր զորամասը և ապահով ռուսական սահմանն անցկացնելով ավելի քան 20,000 հայեր, որոնք դիմել էին նրան թյուրքական լծից ազատագրելու և Ռուսաստանի տիրապետության տակ անցկացնելու համար։ Գեներալ Տեր-Ղուկասովի այս նահանջը ռազմական պատմության մեջ համարվում է ուսանելի նահանջ։

Երևանյան ջոկատի զորքերի մարտական սխրագործություններից մեկն էլ Բայազետի ազատագրումն էր։

1877 թ. հունիսի 6-ին հակառակորդը, մեծ ուժեր կենտրոնացնելով, պաշարում է Բայազետը և պահանջում կայազորից հանձնել բերդը։ Ռուսական փոքրաթիվ կայազորը և մի քանի հարյուր մարդուց բաղկացած հայ կամավորները, մերժում են թյուրքերի պահանջը և դիմում ինքնապաշտպանության։ Ավելի քան տաս հազար մարդուց բաղկացած թյուրքական զորքերը, բազմաթիվ բաշիբոզուկների հետ միասին, մի շարք կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց բերդի հերոս պաշտպանները ետ են մղում նրանց բոլոր գրոհները։

Գտնվելով թշնամու օղակում, գիշեր ցերեկ անընդհատ անհավասար մարտեր մղելով հակառակորդի տասնապատիկ ավելի ուժերի դեմ, Բայազետի կայազորը սպառել էր իր նյութական և ռազմական բոլոր պաշարները։ Միակ փրկությունը դրսի օգնությունն էր։ Իրենց օրհասական դրության մասին նրանք քանիցս փորձել էին տեղեկացնել Տեր-Ղուկասովին, բայց ոչ մի արդյունքի չէին հասել։ Վերջապես հայ քաջարի կամավորներից մեկին՝ Սամսոն Տեր-Պողոսյանին հաջողվում է քրդական տարազով ծպտյալ կերպով անցնել թշնամու օղակով և լուր հասցնել Տեր-Ղուկասովին։

Հաջողությամբ ավարտելով իր նշանավոր նահանջը, Երևանյան ջոկատը արշավում է Բայազետի վրա և 8 ժամյա համառ մարտերից հետո, ազատագրում է Բայազետի կայազորին։

1877 թ. աշնանը պատերազմական գործողությունները ավելի լայն ծավալ են ստանում։ Ռուսական զորքերը վճռական քայլերի են դիմում Կարսի նշանավոր ամրոցը գրավելու համար։ Թյուրքերն իրենց հերթին, անգլիական ռազմագետների օգնությամբ ամրացրել էին Կարսը, ամեն կերպ աշխատում էին պահել այն իրենց ձեռքում և նույնիսկ մտադիր էին հարձակման անցնել՝ Երևանն ու Թիֆլիսը գրավելու համար։

Բայց ինչպես միշտ, այս անգամ ևս, թյուրքերի հույսերը չարդարացան։ Հոկտեմբերի 3-ին Ալաջայի բարձունքներում ռուսական քաջարի զորքերը Լոռիս-Մելիքովի և Լազարևի գլխավորությամբ ջախջախիչ հարված հասցրին թյուրքական զորքերին և ցիր ու ցան արին նրանց։ Մուխտար փաշան իր շքախմբով հազիվ կարողացավ փախչել ու փրկվել գերի ընկնելուց։ Ռուսները հետապնդելով փախչող թյուրքերին, գրավեցին Դեվե-Բոյունը և պաշարեցին Էրզրումը։

Այս հաղթանակներից հետո, ռուսական զորքերը շրջապատեցին Կարսը։ Կարսի գրավումը հանձնարարվեց գեներալ Լազարևին։ Նոյեմբերի 5-ին երեկոյան ռուսական զորքերը կուռ շարքերով նետվեցին թշնամու ամրություններին վրա։ Հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս և մեծ կորուստներ պատճառում։ Կորպուսի հրամանատար Լոռիս-Մելիքովը կարգադրում է նահանջել, բայց Լազարևը նրան հայտնում է. «Ես գրոհում եմ անդառնա-

լիորեն։ Եթե Կարսը չվերցնեմ գիշերը, ապա կվերցնեմ ցերեկը, կամ կկռվեմ մինչև հաջորդ գիշերը»։ Նոյեմբերի 5-ի ամբողջ գիշերը համառ մարտեր էին մղվում Կարսի համար։ Զդիմանալով ռուսական քաջարի զինվորների շեշտակի հարվածներին թյուրքերը հանձնվում են։ Նոյեմբերի 6-ի առավոտյան Կարսի հռչակավոր ամրոցը ռուսների ձեռքումն էր, թյուրքական ամբողջ կայազորը՝ ավելի քան 17 հազար զինվոր, 800 սպա, 5 փաշա գերի վերցվեց։ Ռուսները կորցրին մոտ 2700 մարդ։

Կարսի առումը Կովկասյան բանակի ամենախոշոր հաղթանակն էր, որը ոչ միայն վճռեց այդ ռազմաճակատի բախտը, այլև կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ պատերազմի ելքի համար։

1878 թ. հունվարի 21-ին կնքված զինադադարի համաձայն ռուսական զորքերը մտան Էրզրում։ Այնուհետև նրանք չշարունակեցին իրենց առաջխաղացումը, քանի որ Բալկանյան ռազմաճակատում ռուսների տարած փայլուն հաղթանակներից հետո, թյուրքական սուլթանը հարկադրված հաշտություն էր խնդրել, որից հետո դադարեցվել էին պատերազմական գործողությունները և հաշտության բանակցություններ սկսվել։

Հայերի մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմին.— *1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմը ազատագրության նոր հույսեր արթնացրեց թյուրքական լծի տակ հեծող հայերի մեջ։ Հավատացած, որ միայն Ռուսաստանի օգնությամբ իրենք կարող են թոթափել թյուրքական բռնակալության ծանր լուծը, արևմտահայերն ամեն կերպ օժանդակում էին ռուս զորքերին, ամեն ջանք գործադրում նրանց հաղթանակի համար։*

Ինչպես նախորդ պատերազմների ժամանակ, այս անգամ ևս հայերը ակտիվորեն մասնակցեցին ընդհանուր թշնամու՝ թյուրքերի դեմ մղվող մարտերին, չխնայելով իրենց կյանքը և նյութական միջոցները։ Պատերազմին մասնակցած, ականատես ռուս հրամանատարներից և զինվորներից շատերը վկայում են, թե ինչպես հայերն ամենուրեք ջերմությամբ էին դիմավորում ռուս զորքերին, իսկ վերջիններս իրենց զգում էին հարազատ միջավայրում։

Պատերազմի հենց սկզբից Անդրկովկասի հայերը, վրացիների ու ադրբեջանցիների հետ միասին, մի շարք կամավորական դնդեր կազմակերպեցին, որոնք գործոն մասնակցություն ունեցան Կովկասյան ռազմաճակատի գրեթե բոլոր քիչ թե շատ նշանավոր մարտերին։

Կամավորական հեծյալ դնդեր ու դրուժիններ կազմակերպվեցին Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրոպոլում, Նախիջևանում, Թիֆլիսում, Ախալցխայում, Բաքվում, Ղարաբաղում, Գոնձակում և մի շարք այլ վայրերում։ Հազարավոր հայեր, վրացիներ ու ադրբեջանցիներ մտան մարտական այդ դրուժինների շարքերը և պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում, ռուս զինվորների հետ ձեռք-ձեռքի տված գործեցին ռազմաճակատում ու թիկունքում։

Զգալի էր նաև հայերի նյութական օգնությունը։ Այսպես, օրինակ, Երևանի նահանգի բնակչությունը ռուսական զորքին 1877—1878 թթ. մատակարարում է՝ 44,444 սայլ, 1637 ձի, 6496 ուղտ։

Կամավորական շարժումը և ռուս զորքերին ցույց տրվող նյութական օգնությունը է՛լ ավելի լայն ծավալ ստացավ արևմտահայերի մեջ։ Ամենուրեք ռուս զինվորներին դիմավորելով որպես իրենց փրկիչների, թյուրքական բրո-

նակալության լծի տակ հեծող արևմտահայ գյուղացիները իրենց տան դռները լայն բաց էին անում նրանց առաջ, կաթ, մածուն, հաց, միս, գինի և այլ սննդամթերք մատակարարում, ձրիաբար բեռներ փոխադրում, հակառակորդի մասին տեղեկություններ հաղորդում և այլն։ Բացի նյութական օգնությունից, արևմտահայերի օրինակով, նրանք ևս կամավորական ջոկատներ էին կազմակերպում և ռուս զորքերի հետ, կամ առանձին, կռիվներ մղում թշնամու դեմ։

Կարսի, Արդահանի, Կաղզվանի, Բայազետի, Ալաշկերտի և այլ վայրերի համար մղված մարտերում, հայ կամավորներից շատերը աչքի ընկան իրենց քաջագործություններով և պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Իր բացառիկ խիզախությամբ ժողովրդի մեջ հայտնի դարձավ Ղարաջորան գյուղացի շարքային կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը, մեր տաղանդավոր վիպասան Րաֆֆու «Խենթ» վեպի դլխավոր հերոս Վարդանը։ Ռուսական բանակի հայ գեներալներից իրենց հմուտ մարտական գործողություններով աչքի ընկան Տեր-Ղուկասովը, Լազարևը և ուրիշներ։

Ռուս-թյուրքական պատերազմը միանգամ ևս ցույց տվեց, որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնության համակրանքը Ռուսաստանի կողմն է, որ նա ոչ թե թյուրքական սուլթանի թիկունքում կանգնած արևմտաեվրոպական պետություններից, այլ Ռուսաստանից է սպասում իր փրկությունը։

Հայկական հարցի ծագումը.— Ռուս-թյուրքական պատերազմը վերջացավ Ռուսաստանի լիակատար հաղթանակով։ 1878 թ. մարտի 3-ին Սան-Ստեֆանոյում կնքվեց ռուս-թյուրքական հաշտության պայմանագիրը, որտեղ առաջին անգամ միջազգային պայմաններում, 16-րդ հոդվածի տակ, իր արտահայտությունը գտավ հայկական հարցը։

Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց, ծագել է 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմից հետո և կազմում է արևելյան հարցի մի մասը։ Որպես այդպիսին, նա անմիջականորեն վերաբերում է Արևմտյան Հայաստանին։

Մինչև 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմը, հայ ժողովրդի բոլոր փորձերը՝ Արևմտյան Հայաստանը թյուրքական զավթիչների լծից ազատագրելու ուղղությամբ, ցանկալի արդյունք չտվին։ Ո՛չ սուլթանական կառավարության թանզիմաթը և ո՛չ էլ արևմտահայերի «Ազգային Սահմանադրությունը» էական փոփոխություն չմացրին արևմտահայ ժողովրդի դրության մեջ։ Ավելին. այն ժամանակ, երբ սուլթանական կառավարությունն իր թղթե ռեֆորմներով և սահմանադրական իլյուզիաներով կերակրում էր Կոնստանդնուպոլսի հայ հասարակությանը, արևմտահայ ժողովուրդը, հատկապես գյուղացիությունը, հայկական գավառներում հետզհետե ավելի ու ավելի անողոք ենշման ու հարստահարման էր ենթարկվում։

Միքայել Նալբանդյանը, «Ազգային թշվառություն» իր հայտնի հոդվածում, դեռևս 1863 թ. նկարագրելով արևմտահայերի ծանր վիճակը, գրում էր. «Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վրա, ուր այժմ մեր խեղճ-անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում»։

XIX դարի 70-ական թվականներին, մանավանդ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի գահ բարձրանալուց հետո, հայերի տնտեսական, քաղաքական,

ազգային և կրոնական ձնշումներն ու հալածանքներն ավելի էին սաստկացել։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը.— Երբ Սան-Ստեֆանոյում Ռուսաստանի ու Թյուրքիայի ներկայացուցիչները քննում էին հաշտության պայմանագիր կնքելու հարցը, Կոնստանդնուպոլսի հայ պատրիարք Ներսես Վարժապետյանը դիմում է ռուսական դելեգացիային և խնդրում պայմանագրում համապատասխան կետ մտցնել Ռուսաստանի հովանավորության տակ Արևմտյան Հայաստանում ավտոնոմ իշխանություն ստեղծելու և կամ գրաված շրջանները Ռուսաստանին միացնելու վերաբերյալ։ Պետք է ասել, որ արևմտահայերի ձնշող մեծամասնությունը, առանձնապես աշխատավոր գյուղացիությունը, մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հաղթանակի հետ և ամեն կերպ ձգտում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թյուրքական լծից և վերամիավորվել արևելահայերի հետ։ Արևմտահայերի այդ ձգտումները խիստ թշնամաբար էին ընդունում ո՛չ միայն Թյուրքիան, այլև Անգլիան և Ռուսաստանին հակառակորդ արևմտաեվրոպական մյուս պետությունները։ Նման պայմաններում դժվար էր իրագործել հայերի ցանկությունները։ Ռուսական դելեգացիային հաջողվում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցնել մի կետ միայն (16-րդ հոդվածը) Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ, որտեղ ասված է։

«Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց Թյուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքի հեռանալը կարող է կռիվների և բարդությունների տեղիք տալ և բացասաբար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայկական մարզերում, առանց ուշացման, գործադրել տեղական պայմաններից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և հայերի ապահովությունը պաշտպանել քրդերից ու չերքեզներից։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը հեռու էր հայերի ձգտումներն ու ցանկություններն արտահայտելուց, սակայն պատմական տվյալ պայմաններում, հայերի համար դա նպաստավոր մի հոդված էր։ Թեկուզ այն, որ, ըստ այդ պայմանագրի, թյուրքական կառավարությունը պարտավորվում էր մինչև ռուսական զորքերի հեռանալը Հայաստանում տեղական պահանջներից բխող ռեֆորմներ անցկացնել և հայերի ապահովությունը պաշտպանել, դա, անկասկած, դրական նշանակություն կունենար հայերի համար և որոշ չափով կթեթևացներ նրանց վիճակը։ Բայց 16-րդ հոդվածը մնաց թղթի վրա, որովհետև շուտով գումարվեց Բեռլինի կոնգրեսը և վերափոխվեց Սան-Ստեֆանոյի ամբողջ պայմանագիրը։

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը.— 1877—1878 թթ. պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակը և Սան-Ստեֆանոյում կնքված նպաստավոր պայմանագիրը ոտքի են հանում արևմտաեվրոպական մեծ պետություններին, առաջին հերթին Անգլիային և Ավստրո-Հունգարիային։ Նրանց պահանջով վերանայվում է Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։

1878 թ. հունիսի 13-ին Բեռլինում, Բիսմարկի նախագահությամբ, բացվում է Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչների կոնգրեսը։ Բեռլինի կոնգրեսը Ռուսաստանին զրկում է իր հաղթանակի պտուղներից։ Անգլիան, առանց դեդակ արձակելու, Թյուրքիայից գավթում է Կիպրոսը, իսկ Ավստրիան՝ Բոսնիան և Հերցոգովինան։

Բեռլինի կոնգրեսում վերանայվում է նաև Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը։ Բեռլին գնացած հայկական պատվիրակությունը (Մկրտիչ Խրիմյան, Խորեն Նարբեյ, Մինաս Չերազ և Ստեփան Փափազյան) կոնգրեսին ներկայացնում են հայկական խնդիրը, բայց այդ մերժվում է։ Հայ պատվիրակությանը թույլ չեն տալիս նույնիսկ կոնգրեսի շենքը մտնել։ Եվ այդպես, առանց հայերի մասնակցության, որոշում են հայկական հարցը։ 16-րդ հոդվածը փոխարինվում է 61-րդ հոդվածով, որտեղ ասված է.

«Բարձրագույն Դուռը պարտավորվում է, առանց ուշացնելու, հայկական մարզերում գործադրել տեղական պահանջներից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և հայերի անվտանգությունն ապահովել չերքեզներից ու քրդերից։ Այդ նպատակի համար ձեռք առած միջոցների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի պետություններին, որոնք պիտի հսկեն նրա գործադրման վրա»։

Բեռլինի պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ էին անցնում Կարսը, Արդահանը և Բաթումը։

Այսպիսով, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը արևմտահայերի ապահովության և ռեֆորմների հսկողությունը Ռուսաստանի փոխարեն դնում էր տարբեր շահեր ունեցող վեց պետությունների վրա, մի բան, որ, ինչպես փորձն էլ ցույց տվեց, բնավ իրագործելի չէր։ Բեռլինի կոնգրեսը միջազգային պայմանագրից ջնջում էր Հայաստան անունը։ Բեռլինի կոնգրեսը պարտավորեցնում էր ռուս զորքերին անմիջապես դատարկել գրաված վայրերը, նախքան ռեֆորմներ անցկացնելը։

Բեռլինի կոնգրեսը հայկական հարցը դարձրեց մեծ պետությունների շահերի հետ կապված մի հարց, նրա լուծումն անհամեմատ ռեալ ճանապարհից հանեց և դրեց միանգամայն աննպաստ, վերջին հաշվով կորստաբեր ճանապարհի վրա։ Արևելահայերի ու արևմտահայերի վերամիավորման փորձերը տապալվեցին։ Արևմտահայերին չհաջողվեց միանալ Ռուսաստանին և կանգնել զարգացման այն համեմատաբար պրոգրեսիվ ուղու վրա, որով ընթանում էին արևելահայերը։

Բեռլինի կոնգրեսի որոշումները նույնպես մնացին անիրագործելի։ Կապիտալիստական մեծ պետությունները, ինչպես բոլոր փոքր ժողովուրդներին, այնպես էլ հայ ժողովրդին խաբում էին և զոհաբերում նրան իրենց գիշատիչ իմպերիալիստական շահերի համար։ Թյուրքական կառավարությունն էլ, օգտվելով մեծ պետությունների նման փարիսեցիական վերաբերմունքից, անպատիժ կեղեքում ու բնաջնջում էր հայ ժողովրդին։

Խոսելով Արևմտյան Հայաստանի (Թյուրքահայաստանի) այդ տարաբախտ վիճակի մասին, Ի. Վ. Ստալինը 1917 թ. գրում էր.

«Այդ այն «դրախտային անկյունն» է, որը երկար տարիներ Արևմուտքի ագահ դիվանագիտական իղձերի և Արևելքի արյունոտ վարչական մարզանքների առարկա է ծառայել (և շարունակում է ծառայել)։ Հայերի ջարդեր ու կոտորած, մի կողմից, բոլոր երկրների դիվանագետների փարիսեցիական «պաշտպանություն», որպես նոր կոտորածի քողարկում, մյուս կողմից, իսկ դրա հետևանքով արյունաշաղախ, խաբված ու ստրկացված Հայաստան,— ո՞ւմ ծանոթ չեն «քաղաքակիրթ» տերությունների դիվանագիտական «հերոսությունների» այդ «սովորական» պատկերները»։ (Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 30)։

Արևմտյան Հայաստանի հարցը, Բեռլինի կոնգրեսից սկսած միջազգային

դիպլոմատիայի մեջ մտավ «Հայկական հարց» անունով։ Հետագայում այդ հարցի շրջանակներն ավելի լայնդարձակվեցին, բայց նրա լուծման ուղղությամբ դրական ոչինչ չարվեց։ «Այսպես կոչված հայկական պրոբլեմը», որի վրա ապարդյուն կլուխ էին ջարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, կարողացավ լուծել միայն Սովետական իշխանությունը» (Ստալին)։

3. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 1870—1880 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում.— Թյուրքական բռնապետության տակ հեծող արևմտահայ ժողովրդի վիճակը 1870—1880-ական թվականներին ավելի ծանրացավ։ Սուլթանական կառավարությունը բարձրացրեց հարկերի ու տուրքերի չափը, ավելի ուժեղացրեց ազգային ճնշումներն ու հալածանքները։ Թյուրք փաշաներն սկսեցին ավելի մեծ մասշտաբներով կիրառել բռնի ասիմիլյացիայի քաղաքականությունը։ Նրանք կազմակերպեցին մասսայական կոտորածներ։ Այսպես, օրինակ, 1877—78 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ սուլթանական զորքերը հայ ժողովրդական մասսաների ջարդեր կազմակերպեցին Վանի, Ալաշկերտի գավառներում և սահմանամերձ մի շարք այլ շրջաններում։

Ի պատասխան օր-ավուր խստացող դաժան ճնշումներին ու հարստահարություններին՝ 1870—1880-ական թվականներին Արևմտյան Հայաստանում բռնկվեցին ազգային-ազատագրական բնույթի ժողովրդական մի շարք ելույթներ։

1878 թվականին Զեյթունի բնակչությունը նորից զինված ապստամբություն բարձրացրեց սուլթանական կառավարության դեմ։ Ապստամբները գերի վերցրին Դայմագամին և նրա 22 պաշտոնյաներին։ Ամրանալով լեռներում զեյթունցիները մի ամբողջ տարի հերոսաբար պարտիզանական կռիվներ էին մղում թյուրքական կանոնավոր զորքերի դեմ։

1880 թվականին ազատագրական շարժում ծավալվեց Վասպուրականում, Սասունում և Ալաշկերտում։ Թյուրքական տիրապետության դեմ ուղղված ազատագրական այդ շարժմանը մասնակցում էին նաև քուրդ և ասորի ժողովուրդները։ Ապստամբական նոր ելույթներ տեղի ունեցան Զեյթունում 1884 թվականին և Վան քաղաքում՝ 1886 թվականին։ Սակայն լինելով իրարից անջատ և տարերային շարժումներ, նրանք ճնշվեցին թյուրքական բռնապետության կողմից։

Արևմտյան Հայաստանում թյուրքական սուլթանների ու փաշաների դեմ բռնկված ժողովրդական-ազատագրական այդ շարժումները հաճախ ուղղվում էին նաև քուրդ ու հայ կեղեքիչների դեմ։

Քաղաքական խմբակներ ու կազմակերպություններ.— 1870—1880-ական թվականներին ստեղծվեցին մի շարք քաղաքական գաղտնի ընկերություններ, որոնք նպատակ ունեին կազմակերպել հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ։

Դեռևս 1872 թվականին Վանում հիմնվեց մի գաղտնի խմբակ, որն ուներ «Միություն ի փրկություն» անունը։ Խմբակը ձգտում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրել արևմտահայ ժողովուրդը սուլթանական բռնակալության լծից։ Խմբակի մեջ ընդգրկված էին բավական թվով գյուղացիներ, արհեստավորներ և մանր առևտրականներ։

1881 թվականին Էրզրումում (Կարինում) կազմակերպվեց մի գաղտնի ընկերություն, որ կոչվում էր «Պաշտպան հայրենյաց»։ Ընկերությունը նպատակ է ունեցել կազմակերպել զինված ապստամբություն և այդ ճանապարհով ազատագրել արևմտահայ ժողովուրդը թյուրքական բռնապետության ծանր լծից։ Էրզրումի կազմակերպության անդամների թիվը հասել է մի քանի հարյուրի. ընկերությունը կապեր է ունեցել Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների, ինչպես և Անդրկովկասի հետ։ Կազմակերպությունն ունեցել է հեկտոգրաֆ, որը տպագրել է կոչեր, երդումնագրեր և այլն։ Սակայն նա երկար կյանք չունեցավ։ 1882 թվականի նոյեմբերին թյուրքական ոստիկանությունը հայտնաբերեց ընկերությունը և այն լիկվիդացիայի ենթարկեց։ Կատարվեցին մասսայական ձերբակալություններ։ Շատերը բանտարկվեցին ու աքսոր ուղարկվեցին։ «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը հանդիսանում էր ոչ միայն Էրզրումի, այլև մյուս գավառներում խմորվող ժողովրդական-ազատագրական շարժման ծնունդ։

1882 թվականին Մոսկվայում տեղի հայ ուսանող երիտասարդներից մի խումբ հիմնեց «Հայրենասերների միություն» անունով մի կազմակերպություն, որի գլխավոր խնդիրն էր օգնել արևմտահայերին թյուրքական լծից ազատագրելու համար։ Միությունը հրատարակեց իր օրգանը, որ կոչվում էր «Ազատության ավետաբեր», հրապարակեց թռուցիկներ, գործնական քայլեր կատարեց իր անդամներին Արևմտյան Հայաստան ուղարկելու համար։ Սակայն նա երկար կյանք չունեցավ և ինքնալիկվիդացիայի ենթարկվեց 1884 թվականին։ Միության անդամներից շատերը գտնվում էին նարոդնիկական գաղափարախոսության ազդեցության տակ, իսկ մի մասն ուներ նացիոնալիստական գաղափարախոսություն և հետագայում մտավ հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու կազմակերպությունների մեջ։

Ազատագրական շարժման գաղափարախոսությունը.— Թյուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական շարժումն ունեցավ իր գաղափարախոսությունը։ Ազգային-ազատագրական գաղափարների պրոպագանդայի գործում առանձնապես խոշոր դեր խաղացին բանաստեղծ Ռափայել Պատկանյանը և վիպասան Րաֆֆին։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը տարիներ շարունակ մարտական կոչեր են արել արևմտահայ ժողովուրդը թյուրքական բռնակալության ծանր լծից ազատագրելու համար։

Ռափայել Պատկանյանը հետևողականորեն այն միտքն էր քարոզում, թե անհրաժեշտ է զինված ապստամբություն բարձրացնել թյուրքական բռնապետության դեմ և ազատագրել արևմտահայությունը դաժան ճնշումներից ու հալածանքներից։ Ազգային-ազատագրական գաղափարների պրոպագանդայի ուղղությամբ Պատկանյանն առանձնապես աշխույժ գործունեություն ծավալեց 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի տարիներին։ Պատերազմը և նրա հետ կապված ակնկալությունները նոր ոգևորություն պատճառեցին Պատկանյանին։ Նա հրապարակ բերեց մեծ թվով բանաստեղծություններ, որոնք ավելի անվերապահ ու վճռական կերպով քարոզում էին հայ ժողովրդի ազգային-ազատագրության գաղափարը։

Րաֆֆին ազգային-ազատագրական գաղափարների պրոպագանդա կատարեց ինչպես իր գեղարվեստական գործերում («Խենթ», «Կայծեր», «Դավիթ բեկ» և այլն), այնպես էլ հրապարակախոսական հոդվածներում։ Նա ևս այն միտքն էր քարոզում, թե արևմտահայ ժողովուրդը կարող է ազատագրվել

միայն զինված ապստամբության միջոցով։ «Առանց արցունքի, առանց զոհերի՝ փրկություն չի լինում»,— գրում էր նա։ Ռաֆֆին կոչ էր անում դիմելու սեփական նախաձեռնության և ակտիվ գործունեության։ Նա մատնացույց էր անում Բալկանյան թերակղզում ծավալված ազատագրական շարժումները և գտնում էր, որ արևմտահայերը պետք է հետևեն բուլղար և մյուս ժողովուրդների օրինակին։

Արևմտահայերին թյուրքական տիրապետությունից ազատագրելու հարցում Ռաֆֆին խոշոր հույսեր էր կապում Ռուսաստանի հետ։ Որ մի շարք երկերում ջերմորեն և ոգևորությամբ նկարագրելով ռուսական զորքի արիությունը և մարդասիրությունը, նա գտնում էր, որ ռուսական զորքերի օգնությունը վճռական դեր պիտի խաղա արևմտահայերի ազատագրության գործում։ Նա միաժամանակ նշում էր այն, որ արևմտահայերը, գտնվելով անհամեմատ բարենպաստ պայմանների մեջ, պետք է ամեն կերպ օգնեն իրենց արևմտահայ եղբայրներին՝ ազատագրվելու սուլթանական դաժան տիրապետությունից։

Արևմտահայերի ազատագրության ուղղությամբ Ռաֆֆու, ինչպես և Պատկանյանի, ծավալած պրոպագանդան խոշոր ազդեցություն գործեց ժամանակի հայ երիտասարդ սերնդի վրա։ Նրանց գաղափարական պրոպագանդայի ստիպիչական ազդեցության տակ երիտասարդ սերունդի բազմաթիվ ներկայացուցիչներ քաղաքական գործունեություն ծավալեցին Արևմտյան Հայաստանում։

Պատկանյանի և Ռաֆֆու գաղափարախոսությունն ունի մի շարք սխալ և ընդունելի կողմեր։ Նրանց որոշ երկերում իր արտահայտությունն է գտել նացիոնալիստական գաղափարախոսությունը։ Սակայն, չնայած դրան, և՛ Պատկանյանը, և՛ Ռաֆֆին արտահայտել են հայ ժողովրդի ազատագրական տենչանքներն ու ձգտումները։

1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի շրջանում թյուրքական լծից արևմտահայերի ազատագրության պրոպագանդայով հանդես եկավ Գրիգոր Արծրունին։ Այդ պրոպագանդան նա մղում էր ելնելով հայ բուրժուազիայի շահերից։

Ազատագրական շարժումը և արևմտյան պետությունները.— Արևմտահայերի ազատագրական շարժումները ջերմ արձագանք գտան հարևան երկրներում և մասնավորապես ռուս, վրաց և ադրբեջանական ժողովուրդների մեջ։ Դեմոկրատական ու պրոգրեսիվ շրջաններն իրենց համակրությունը հայտնեցին թյուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման նկատմամբ։

Սակայն այդ շարժման նկատմամբ միանգամայն թշնամական դիրք բռնեցին արևմտյան պետությունները։ Նպատակ ունենալով ամբողջ թյուրքիան իրենց գաղութային ցանցի մեջ առնել, նրանք աշխատում էին անխախտ պահել սուլթանական բռնապետության լուծը նվաճված ժողովուրդների վրա։ 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի շրջանում, երբ ծավալվեցին բուլղար և հայ ժողովրդի ազատագրական շարժումները, անգլիական կառավարությունը բացահայտ կերպով հանդես եկավ ինչպես բուլղար, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրության դեմ։ Զավթելով Թյուրքիայից Կիպրոս կղզին, Անգլիան միաժամանակ դիմեց ամեն միջոցի, որպեսզի պահպանվի սուլթանական Թյուրքիայի տիրապետությունը Արևմտյան Հայաստանում։ Պատերազմի տարիներին Անգլիան զենք ու զինամթերք էր ուղարկում Թյուրքիա-

անգլիական սպաները հրահանգներ էին տալիս և երբեմն ղեկավարում էին թյուրքական զորքերի շտաբներին։

Հայ ժողովրդի ազատագրական շարժման դեմ հանդես եկավ նաև Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը։ Ելնելով իր գաղութային-նվաճողական ծրագրերից, նա ամեն կերպ պաշտպանում և հովանավորում էր սուլթանական բռնակալությունը։ 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ Ամերիկան ահագին քանակությամբ զենք ու զինամթերք մատակարարեց Թյուրքիային՝ ինչպես Ռուսաստանի դեմ, այնպես էլ բուլղար և հայ ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ կռվելու համար։ Ամերիկյան միսիոներները, որոնք վխտում էին ամբողջ Մերձավոր Արևելքում, ձգտում էին զանազան խարդախ միջոցներով պառակտել արևմտահայ մասսաների ազատագրական պայքարի միացյալ ճակատը։ Սուլթանական դաժան բռնակալության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական շարժման դեմ թշնամական դիրք բռնեցին նաև Ֆրանսիան ու Գերմանիան։

Հայ ժողովրդական մասսաների ազատագրական շարժման դեմ հանդես եկան արևմտահայ խոշոր հղփացած բուրժուազիան (ամիրաններ, սառաֆներ) և բարձր հոգևորականությունը։ Նրանք բազմաթիվ թելերով կապված էին սուլթանական կառավարության հետ և շահագրգռված էին տիրող ռեժիմի պահպանության մեջ։

Ելույթներ ցարիզմի դեմ.— 1870—1880-ական թվականներին ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում տեղի ունեցան գյուղացիական ռևոլյուցիոն շարժումներ տիրող կարգերի դեմ։ Այդ նույն ժամանակաշրջանում բռնկվեցին նաև ազգային-ազատագրական բնույթի ելույթներ, ուղղված ցարիզմի ազգային ճնշման ու գաղութային քաղաքականության դեմ։

Ցարական ինքնակալությունը ազգային-գաղութային ճնշման իր քաղաքականությունն առանձնապես ուժեղացրեց 1880-ական թվականներին։ Սաստկացավ հալածանքներն ամբողջ կայսրության մեջ։ Նոր արշավանք սկսվեց ի թիվս մյուս ժողովուրդների, նաև հայ ժողովրդի դեմ։ Խիստ հսկողության տակ առնվեցին պարբերական մամուլը և կուլտուր-կրթական և բարեգործական ընկերությունները, պետական պաշտոններից հեռացվեցին հայ գործիչները։ Առանձնապես խիստ միջոցառումներ ձեռնարկվեցին հայկական դպրոցների նկատմամբ։ Համարելով այդ դպրոցները որպես հայկական կուլտուրայի զարգացման, լուսավորության և ազգային ինքնաճանաչության գլխավոր օջախներ, ցարական կառավարությունը որոշեց խիստ սահմանափակել հայկական դպրոցների թիվը։ 1885 թվականին ոստիկանությունը բռնի կերպով փակեց բազմաթիվ դպրոցներ։

Այս բոլորը խոր զայրույթ առաջացրեց ժողովրդական մասսաների մեջ։ Ամենուրեք տեղի ունեցան բողոքի մասսայական ցույցեր։ Երևանում, Ալեքսանդրոպոլում և այլ վայրերում ցուցարարների ու ոստիկանության միջև տեղի ունեցան զինված ընդհարումներ։ Կոչեր հրապարակվեցին ցարիզմի դեմ։

Հայ բնակչության և ցարական ոստիկանության միջև ընդհարումներ եղան ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում (Թիֆլիս) ու Ադրբեջանում (Բաքու)։ Ընդհարումների ժամանակ եղան բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ։ Կատարվեցին մասսայական ձերբակալություններ։

Հասարակական-քաղաքական հոսանքներ.— Հայ իրականության մեջ 1870-

1880-ական թվականներին գործում էին հասարակական-քաղաքական մի շարք հոսանքներ։ Դրանցից մեկն էր պահպանողական-կղերական հոսանքը, որի ներկայացուցիչները համախմբված էին գլխավորապես «Մեղու Հայաստանի» և «Նոր դար» թերթերի շուրջը։ Նշված թերթերի անունով էլ այդ հոսանքի կողմնակիցները հաճախ իրենց անվանում էին «մեղվականներ» կամ «Նոր դարականներ»։ Նրանք աշխատում էին պահպանել հին կարգերն ու հարաբերությունները, ձգտում էին այն բանին, որպեսզի եկեղեցին իշխող դիրք ունենա հայ հասարակական, քաղաքական ու կուլտուրական կյանքում։ Նրանք դեմ էին նոր, առաջավոր կուլտուրային, դրականությանը և արվեստին։ Նրանք պայքարում էին ժողովրդի ազատագրական-ռևոլյուցիոն շարժման դեմ և քարոզում էին համակերպվել տիրող կարգերի հետ։

Այս նույն ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն ծավալեց հայ լիբերալ-բուրժուական հոսանքը, որի պարագլուխն էր Գրիգոր Արծրունին (1845—1892)։ Նա 1872—1892 թթ. խմբագրում էր «Մշակ» լրագիրը, որի անունով էլ երբեմն այդ հոսանքի ներկայացուցիչները իրենց անվանում էին «մշակյաններ»։

Արտահայտելով կովկասահայ արդյունաբերական բուրժուազիայի շահերը, լիբերալ-բուրժուական հոսանքը ողջունում էր կապիտալիզմի զարգացումը, ձգտում էր այն բանին, որպեսզի երկրում ստեղծվեն ավելի շատ առևտրաարդյունաբերական ընկերություններ, գործարաններ ու ֆաբրիկաներ։ Լիբերալները հանդես էին գալիս պահպանողականների դեմ։ քննադատում էին ֆեոդալական ռեակցիոն կուլտուրան, աշխատում էին սահմանափակել եկեղեցու դերը հասարակական-կուլտուրական կյանքում, կողմնակից էին դպրոցական ռեֆորմների, քարոզում էին նոր, բուրժուական կուլտուրա։ Նրանք իրենց բաղաքական ծրագրերի իրականացումը կապում էին ցարիզմի հետ, ունեին ռուսական օրիենտացիա և պաշտպանում էին Թյուրքական բռնապետության դեմ ուղղված արևմտահայերի ազատագրական շարժումը։

Բուրժուական լիբերալները ռուսական լիբերալների նման կողմնակից էին ռեֆորմների և թշնամական դիրք էին բռնում գյուղացիական-ժողովրդական ռևոլյուցիոն շարժումների նկատմամբ։ Նրանք վճռական պայքար էին մղում ժողովրդական-դեմոկրատական և սոցիալիստական հոսանքների ու դաղափարների դեմ։

1870-ական թվականներին 1880-ական թթ. սկզբներին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում հանդես եկան ռևոլյուցիոն նարոդնիկներ, որոնք արտահայտում էին գյուղացիական մասսաների շահերը։ Ռևոլյուցիոն նարոդնիկները պայքար ծավալեցին ցարիզմի դեմ։ Նրանք աշխատում էին գյուղացիական բունտեր, ապստամբություններ բարձրացնել, տեռորիստական ակտեր կազմակերպել և այդ ճանապարհով տապալել ցարական ինքնակալությունը։ Սակայն նրանց թե՛ տակտիկան և թե՛ ծրագիրը սխալ էր։ Նարոդնիկները մարքսիզմի հակառակորդներ էին։ Նրանք հաջողություն չունեցան։

Ռուս նարոդնիկների միջավայրում, նրանց ազդեցության տակ, հանդես եկան նաև հայ նարոդնիկներ։ Մոսկվայում, Պետերբուրգում, Խարկովում ու Օդեսայում ուսանող հայ առաջավոր երիտասարդներից մի մասը ընդգրկվեց նարոդնիկական շարժման մեջ և ակտիվ դեր խաղաց նարոդնիկական դաղտնի խմբակներում ու կազմակերպություններում։ Հայ նարոդնիկները ընդգրկվեցին նաև Թիֆլիսում 1875 թվականին հիմնած նարոդնիկական կազմակեր-

պության մեջ, որի անդամների մեծ մասը կազմում էին վրացիները և ռուսները։

Հայ նարոդնիկներից իրենց ռևոլյուցիոն գործունեությամբ աչքի ընկան Կոնստանդին Մամիկոնյանը, Հովհաննես Մանուչարյանը, Սրապիոն Տեր-Դրիգորյանը և ուրիշները։ 1880-ական թվականներին նարոդնիկությունը քայքայվեց ու վերասերվեց։ Հայ նարոդնիկների մի զգալի մասն անցավ լիբերալ դիրքերի վրա կամ մտավ բուրժուա-նացիոնալիստական խմբակների ու կազմակերպությունների մեջ։

Արմենականներ.— 1885 թվականին Ֆրանսիայի Մարսել քաղաքում արևմտահայ բուրժուական հրապարակախոս Մկրտիչ Փորթուգալյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ սկսեց հրապարակվել «Արմենիա» թերթը։ Շուտով նույն տեղ և նույն Փորթուգալյանի ղեկավարությամբ հիմնվեց «Հայոց հայրենասիրական միություն» անունով մի կազմակերպություն, որի նպատակն էր բարելավել արևմտահայերի վիճակը և լուծել հայկական հարցը։ «Արմենիան» դարձավ միության օրգանը և միության անդամներն այդ թերթի անունով էլ իրենց կոչեցին արմենականներ։

Արմենականները սկզբնական շրջանում իրենց գործունեությունը սահմանափակում էին նրանով, որ պահանջում էին ռեֆորմներ անցկացնել Արևմտյան Հայաստանում։ Սակայն հետագայում՝ 1890-ական թվականներին նրանք անհրաժեշտ գտան քաղաքական գործունեություն ծավալել և կազմակերպել ըմբոստություններ ու զինված ելույթներ թյուրքական բռնապետության դեմ։

Արմենականների միությունը բուրժուական կազմակերպություն էր. նա կապված չէր ժողովրդական մասսաների հետ։ Միությունը իր ծրագրերի իրականացումը կապում էր արևմտաևրոպական պետությունների նվաճողական պլանների հետ։ Արմենականների գաղափարախոսությունը ներծծված էր բուրժուական նացիոնալիզմով։

Հնչակյաններ.— 1877 թվականին Ժնևի մի խումբ հայ ուսանողներ, որոնց թվում Ավետիս Նազարբեկ, Մարո Նազարբեկ, Խանապատ և այլն, կազմակերպեցին մի պարտիա, որը իր կենտրոնական օրգան «Հնչակ» թերթի անունով, կոչվեց Հնչակյան պարտիա։ Հնչակյան պարտիան մանր-բուրժուական ազգայնական պարտիա էր։ Չնայած նրա ծրագրում խոսվում էր սոցիալիզմի մասին, բայց նա իրականում ոչ մի առնչություն չուներ սոցիալիզմի հետ։ Հնչակյանները ձգտում էին լուծել հայկական հարցը, ազատագրել Արևմտյան Հայաստանը սուլթանական բռնապետության լծից։ Այդ նպատակով նրանք ստեղծում էին գաղտնի կոմիտեներ, փող էին հավաքում, մարդիկ ու զենք էին փոխադրում Արևմտյան Հայաստան, կազմակերպում էին տեռորիստական ակտեր ու զինված ելույթներ։

Սակայն Հնչակյանների տեռորիստական ավանտյուրիստական տակտիկան ոչ միայն չէր օգնում, այլ ընդհակառակը վնասում էր արևմտահայերի ազատագրության գործին։ Նրանց գաղափարախոսության մեջ իշխում էր նացիոնալիզմը։ Հնչակյանները ձգտում էին ջլատել ու կասեցնել Անդրկովկասի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը.

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական բարենորոգումների խնդիրը.— 1878 թվականին Բեռլինի կոնգրեսում ընդունված պայմանագրի 61-րդ հոդվածը, որ նախատեսում էր

բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, մնում էր որպես մեռած տառ և չէր իրականացվում։ Մեծ պետությունները, որոնք ստորագրել էին այդ պայմանագիրը, ոչ միայն չէին մտածում նրա կենսագործման մասին, այլև թշնամական դիրք էին բռնել հայկական հարցի նկատմամբ։

Թյուրքական կառավարությունը, օգտվելով մեծ պետությունների հովանավորող քաղաքականությունից, ոչ մի քայլ չարեց հայկական բարենորոգումների մասին տված իր խոստումները կատարելու ուղղությամբ։ Ավելին։ Նա ուժեղացրեց ճնշման ու հալածանքների իր քաղաքականությունը։

Կառավարության հրահրումներով զանազան հրոսակախմբեր հաճախակի հարձակումներ էին գործում հայկական գյուղերի ու ավանների վրա և սոսկալի ավեր ու կոտորածներ սարքում։ Սուլթան Աբդուլ Համիդը հրապարակորեն հայտարարում էր, թե պետք է վերացնել Հայկական հարցը, իսկ դրա համար հարկավոր է վերացնել հայ ժողովուրդը։ Արդեն 1880-ական թվականների վերջերին սուլթան Աբդուլ Համիդը ծրագիր էր կազմել հայկական ընդհանուր և մասսայական կոտորածներ կազմակերպելու համար։

1892 թվականին Արևմտյան Հայաստանում կազմակերպվեցին հատուկ հեծյալ զորամասեր, որոնք իրենց հիմնադիր սուլթան Աբդուլ Համիդի անունով կոչվեցին Համիդիե։ Այդ զորամասերի հիմնական խնդիրներից մեկը հայկական ջարդեր կազմակերպելն էր։ Այսպիսով, տարիներ շարունակ խոստացած հայկական բարենորոգումները մնում էին անկատար, հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը դրվում էր վտանգի տակ։

Կոտորածներ Սասունում.— Սասունը հայ ազատագրական շարժման գլխավոր օջախներից մեկն էր։ Այդ է պատճառը, որ թյուրքական կառավարությունը որոշեց հայկական կոտորածներ կազմակերպել առաջին հերթին Սասունում։ Թյուրքական կառավարության կողմից նախօրոք պատրաստված հրոսակախմբերը 1893 թվականին հարձակվեցին Սասունի վրա, բայց հերոսական դիմադրության հանդիպելով՝ ետ շպրտվեցին։ Հրոսակախմբերը կրկնեցին իրենց արշավանքը, 1894 թվականի գարնանը նրանք նորից հարձակվեցին Սասունի վրա, բայց այս անգամ էլ ուժեղ հակահարված ստանալով, փախուստի դիմեցին։ Սակայն նույն թվականի ամռանը, սուլթան Աբդուլ Համիդի հրամանով, Սասունի վրա հարձակվեց թյուրքական չորրորդ բանակը՝ Զեքի փաշայի հրամանատարությամբ։

Սասունի հայ գյուղացիությունը ցույց տվեց հերոսական դիմադրություն։ Նա կատարեց բազմաթիվ սխրագործություններ և տվեց խիզախության ու անձնազոհության սքանչելի օրինակներ։ Սակայն ուժերն անհավասար էին։ Թշնամին հաղթեց։ Սասունն ավերվեց ու թալանվեց, բնակչությունը, առանց սեռի ու հասակի խտրության, մասսայական կոտորածի ենթարկվեց։

Սասունի հայ բնակչության 1894 թվականի կոտորածը տեղի ունեցավ օգոստոս և սեպտեմբեր ամիսներին։ Այդ ժամանակամիջոցում ավերվեց 48 հայկական գյուղ, գաղանաբար սպանվեց մոտ 10 հազար մարդ։

Ընդհանուր կոտորածներ 1895—1896 թթ.— Սասունի կոտորածները մեծ բողոք ու զայրույթ առաջացրին համարյա բոլոր երկրներում։ Ռուսաստանի ու եվրոպական մյուս պետությունների հասարակական կարծիքն իր ձայնը բարձրացրեց սուլթանական կառավարության դեմ և պահանջեց կտրուկ միջոցներ ձեռնարկել նրա նկատմամբ։ Սակայն արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը որոշեց կազմակերպել նոր, ավելի մասսայական և ընդհանուր կոտորածներ։

Նրա անմիջական ցուցումով 1895 թ. սեպտեմբերին տեղի ունեցան հայ բնակչության կոտորածներ Կ. Պոլսում։ Կոստանդնուպոլսի ջարդերի օրինակով և սուլթանական կառավարության նախօրոք կազմած ծրագրի համաձայն, ջարդեր սկսվեցին Թյուրքիայի հայաբնակ բոլոր գավառներում ու Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում։ 1895 թվականի սեպտեմբերի վերջերին ջարդեր տեղի ունեցան Տրապիզոնում, հոկտեմբերին՝ Էրզրումում, Մարաշում։ Այնուհետև կոտորածներ տեղի ունեցան Սեբաստիայում, Երզնկայում, Վանում, Բաղեշում, Խարբերդում, Տիգրանակերտում և հայաբնակ մյուս բոլոր վայրերում։ Արևմտյան Հայաստանի և ոչ մի անկյուն զերծ չմնաց ուրյունահեղ ջարդերից։ 1896 թվականի օգոստոսին նոր կոտորածներ տեղի ունեցան Կոստանդնուպոլսում, որտեղ սպանվեց մոտ 8000 մարդ։

Հայ բնակչությանը կոտորում էին թե՛ կանոնավոր զորքերը և թե՛ անկանոն հրոսակախմբերը։ Ջարդարարները գործադրում էին անասելի բռնություններ և գազանություններ։ Նրանք սպանում էին ամենավայրագ ձևերով, կտրում էին իրենց զոհերի գլուխները, խեղդում էին թոկով, կախում էին ծառերից, այրում էին խարույկի վրա։ Թյուրք ջարդարարները կոտորում էին առանց սեռի ու հասակի խտրության, հավասարապես սպանում էին տղամարդկանց, կանանց, երեխաներին ու ծերունիներին։ Գործադրում էին ամեն տեսակ խոշտանգումներ, թալանում և հափշտակում էին ժողովրդի կայքն ու գույքը։

1895 թվականի աշնանից ծայր առած այդ մասսայական կոտորածները շարունակվեցին և 1896 թվականին։ Հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ ավերվեցին, բազմաթիվ շրջաններ ամայացան։ Արևմտահայ ժողովրդի զոհերի թիվը հասավ մոտ երեք հարյուր հազարի։

Զեյթունի ինքնապաշտպանությունը.— 1895—1896 թվականների հայկական կոտորածների ընթացքում արևմտահայ բնակչության մի քանի հատվածներ ինքնապաշտպանության փորձեր կատարեցին։ Ջարդարար հրոսակախմբերին դիմադրելու նպատակով նրանք զենքի դիմեցին։ Ինքնապաշտպանության այդ փորձերի մեծ մասը, սակայն, վերջացավ անհաջող։ Թյուրքական զորքերը, որոնց մեջ մտնում էին նաև համիդիե կոչված հատուկ զորամասերը և բազմաթիվ ավազակային-անկանոն խմբեր, կարողացան ընկճել զենք վերցրած հայ բնակչության դիմադրությունը։ Ինքնապաշտպանական ելույթներից հաջողություն ունեցան միայն մի քանիսը։ Նրանցից առանձնապես աչքի ընկավ Զեյթունի հայ բնակչության ինքնապաշտպանությունը։

Սուլթանական կառավարությունը 1895 թվականին նախապատրաստություններ տեսավ նաև Զեյթունում՝ հայկական ջարդեր կազմակերպելու համար։ Սուլթան Արդուլ Համիդը այնտեղ ուղարկեց նոր զորամասեր։ Սուլթանական զորքերը 1895 թվականի աշնանը հարձակում կատարեցին Զեյթունի վրա։ Զեյթունցիներն անցան հակահարձակման։ Թյուրքական զորքերը պարտվեցին և փախուստի դիմեցին։ Զինված բնակչությունը գրավեց թյուրքական զորանոցը, դերի վերցրեց զորամասը և բանտարկեց սուլթանական կառավարության պաշտոնեությունը։ Սուլթանի հրամանով ըմբոստների դեմ շարժվեց մի նոր բանակ՝ գնդապետ Ալի-բեյի հրամանատարությամբ։ Սակայն, Ալի-բեյը նույնպես հաջողություն չունեցավ։ Դեկտեմբերին թյուրքական զորքերը նորից հարձակման անցան։ Տեղի ունեցան կատաղի կռիվներ։ Թյուրքական բանակը կրեց զգալի կորուստներ, բայց չկարողացավ ընկճել զեյթունցիների

դիմադրությունը։ Քաջարի լեռնականները հաջողությամբ ետ մղեցին թշնամու բոլոր գրոհները և մեծ կորուստներ պատճառեցին նրան։

Զեյթունցիների ամիսներ տևող հերոսական ինքնապաշտպանության լուրը տարածվեց գրեթե բոլոր երկրներում։ Մեծ պետությունները, հասարակական կարծիքի ճնշման տակ, ստիպված եղան միջամտել գործին։ 1896 թվականի հունվարին Զեյթուն եկան շեզոք պետությունների ներկայացուցիչները։ Նրանց ղեկավարությամբ հաշտության բանակցություններ սկսվեցին երկու կողմերի միջև։ Բանակցությունները վերջացան կոմպրոմիսով։ Սուլթանական կառավարությունը խոստացավ կոտորածներ չկազմակերպել Զեյթունում և թեթևացնել հարկերը, իսկ զեյթունցիները պարտավորվեցին ելույթներ չունենալ սուլթանական կառավարության դեմ և վերադարձնել այն զենքերը, որ կռիվների ընթացքում գրավել էին թյուրքական զորքերից։ Այս հաշտությունից հետո զեյթունցիները որոշ ժամանակ զերծ մնացին կոտորածներից ու հափշտակումներից։

Հայկական ջարդերը և մեծ պետությունները.— 1890-ական թվականների հայկական ջարդերի ժամանակ բազմիցս դիմումներ ուղղվեցին Եվրոպական մեծ պետություններին՝ նրանց միջամտությունն ու օգնությունը խնդրելու՝ հայկական կոտորածներին վերջ տալու համար։ Սակայն պետություններին տրված այդ դիմումներն անհետևանք մնացին։ Մեծ պետությունները գործնական և ոչ մի քայլ չարին հայկական ջարդերը կանխելու կամ կանդնեցնելու ուղղությամբ։ Ավելին։ Նրանցից մի քանիսը հովանավորող քաղաքականություն վարեցին ջարդարար սուլթանական կառավարության նկատմամբ։

Հայկական կոտորածների գործում ակնհայտ ռեակցիոն դեր խաղաց Գերմանիան։ Գերմանական գիշատիչ իմպերիալիզմն աշխատում էր իր ճանկերի մեջ առնել ամբողջ Թյուրքիան և նրա տիրապետության տակ գտնվող բոլոր երկրներն ու ժողովուրդները և այդ պատճառով էլ ձգտում էր պահպանել սուլթանական կայսրության «ամբողջականությունը»։ Նա թշնամական դիրք բռնեց հայկական ազատագրական շարժումների նկատմամբ։ Գերմանական կայսր Վիլհելմ II ամեն կերպ հովանավորում էր սուլթան Աբդուլ Համիդին և հրահրում էր նրան հայկական ջարդեր կազմակերպելու։

Անգլիան, ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ 1890-ական թվականներին, վարում էր խարդախ քաղաքականություն։ Նա մի կողմից անում էր կեղծ հայասիրական դեկլարացիաներ, իսկ մյուս կողմից հրահրում էր սուլթան Աբդուլ Համիդին կազմակերպել հայկական կոտորածներ։ Հայկական կոտորածների միջոցով Անգլիան ձգտում էր սրել Ռուսաստանի և Թյուրքիայի հարաբերությունները, մի բան, որ անհրաժեշտ էր անգլիական բուրժուազիայի նվաճողական ծրագրերի իրականացման համար։

Հայ ժողովրդի նկատմամբ թշնամական դիրք բռնեցին նաև Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Հայկական մասսայական կոտորածների ժամանակ ամերիկյան կառավարության ներկայացուցիչները հանդես եկան ջարդարար Աբդուլ Համիդի պաշտպանի դերում և կեղծելով փաստերը պաշտոնական հայտարարություններ արին այն մասին, թե հայ բնակչության կոտորածների մասին եղած լուրերը չափազանցված են և ճիշտ չեն։

Հայկական մասսայական կոտորածները, սուլթանական կառավարության դաղանությունները ու հարստահարությունները մեծ ցասում ու զայրույթ առաջացրին բոլոր ժողովուրդների մեջ։ Հայկական ջարդերի կապակցությամբ

Ռուսաստանում ու Եվրոպական այլ երկրներում տեղի ունեցան բողոքի հրապարակային ցույցեր ու միտինգներ։ Սուլթան Աբդուլ Համիդի դեմ տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ ու գրքեր։ Աբդուլ Համիդը անվանվեց «արյունարբու», «ջարդարար»։ Ռուսական, ֆրանսիական, անգլիական և մյուս ժողովուրդների առաջավոր ինտելիգենցիան իր բողոքի ձայնը բարձրացրեց թյուրքական կառավարության դեմ։ Առաջավոր գործիչները իրենց կառավարություններից պահանջում էին միջամտել և ստիպել սուլթանական կառավարությանը վերջ տալու հայկական կոտորածներին։ Սակայն, այդ բոլորն ապարդյուն անցան։ Թյուրքական կառավարությունը շարունակեց ջարդերի ու կոտորածների իր քաղաքականությունը։

5. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

Կապիտալիզմի զարգացումը.— Ինչպես ամբողջ Ռուսաստանում ու Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում կապիտալիզմը նկատելի զարգացում ապրեց XIX դարի վերջերին։ Կովկասում կապիտալիզմի զարգացմանը խոշոր չափով նպաստեց ռուսական կապիտալիզմը։ Խոսելով հետռեֆորմյան շրջանում Կովկասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Այսպիսով, ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համաշարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա սեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»[1]։

Զգալի աճ նկատվեց հատկապես Կովկասի լեռնաարդյունաբերության մեջ, որի կարևոր ճյուղերից մեկն էր կազմում Հայաստանի պղնձարդյունաբերությունը։ Ալավերդու պղնձաձուլարանների տարեկան արտադրանքը եղել է 1885 թ. 8418, իսկ 1901 թ. 59,000 փութ։ Մինչև 1887 թվականը Ալավերդու պղնձահանքերը շահագործվում էին հույն հանքագործ-ձեռնարկատերերի, իսկ դրանից հետո ֆրանսիական ակցիոներական ընկերության կողմից։ Զանգեզուրի պղնձի արտադրությունը, որ գտնվում էր հայ և հույն բուրժուազիայի ձեռքում, նույնպես նկատելի աճ ունեցավ։ Զանգեզուրի պղնձաձուլարանների տարեկան արտադրանքը եղել է 1892 թ. 22,000, իսկ 1900 թ. 51,000 փութ։

1890-ական թվականներին Հայաստանում հիմնվեցին կապիտալիստական ձեռնարկություններ գինու, սպիրտի և կոնյակի արտադրության գծով։ Այդ ձեռնարկություններից իրենց արտադրությամբ առանձնապես աչքի ընկան կապիտալիստներ Ա.Ֆրիկյանի, Թայիրյանի, Սարտջևի, Շուստովի գործարանները։ Հայաստանում արտադրվել է գինի 1896 թ. 546,000 դույլ, իսկ 1900 թ. 1,180,000 դույլ։ Օղու արտադրության չափը եղել է 1889 թ. 54,000, իսկ 1893 թ. 193,000 դույլ։ Արտադրված գինու, օղու և կոնյակի մի զգալի մասը արտահանվում էր Ռուսաստան և անգամ արտասահման։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 3, էջ 771։

Կապիտալիստական հարաբերությունները շարունակեցին զարգանալ նաև գյուղատնտեսության մեջ։ Ուժեղացավ գյուղացիության շերտավորման ու քայքայման պրոցեսը։ Գյուղացիության մի զգալի մասը զրկվեց հողից ու անասուններից։ 1890-ական թվականների սկզբներին Երևանի նահանգի հողազուրկ գյուղացի բնակիչների թիվը կազմում էր ավելի քան 5211։ Խոշոր էր ցանքս և անասուններ չունեցող գյուղացիների տոկոսը։ Քայքայված, աղքատ գյուղացիները ստիպված էին կամ որպես բատրակներ վարձվել գյուղական կուլակների մոտ, կամ թողնել գյուղը և պանդխտության դիմել։ 1884 թվականին Զանգեզուրի գավառից հեռացել են մոտ 3000 մարդ, իսկ 1893 թվականին Մեծ Ղարաքիլիսայից (այժմ Կիրովական) 1900 մարդ։

Քայքայվող գյուղացիության հաշվին կազմավորվում էր գյուղական բուրժուազիան։ Նա ստեղծում էր ֆերմերային տիպի տնտեսություն, որտեղ գործադրվում էր վարձու աշխատանք։

1880-ական թվականներից սկսած Հայաստանում երևացին ռուսական բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք աշխատում էին իրենց արդյունաբերության համար հումքի մատակարարող բազաներ ստեղծել Հայաստանի գյուղերում։ Այսպես, օրինակ՝ 1880-ական թվականների սկզբներին Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության խոշոր ներկայացուցիչներից մեկը՝ կապիտալիստ Սավվա Մորոզովի գործակալները բամբակ մթերելու նպատակով հատուկ դրասենյակներ բաց արին Երևանի նահանգում և իրենց ձեռքում կենտրոնացրին բամբակի գրեթե ամբողջ արտադրանքը։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով բամբակի մշակույթը նշանակալի զարգացում ապրեց։ Երևանի նահանգում, օրինակ, բամբակի բերք ստացվել է 1886 թ. 157,000 փութ, իսկ 1890 թ. 504,000 փութ։ Այդ տարիներին Երևանի, Էջմիածնի գավառներում գործում էին հարյուրից ավելի բամբակազտիչ ձեռնարկություններ։

Սակայն, չնայած այս բոլորին՝ ինչպես գյուղատնտեսությունը, այնպես էլ արդյունաբերությունը դեռևս գտնվում էր խիստ հետամնաց վիճակում։ Գյուղատնտեսությունը մշակվում էր պրիմիտիվ միջոցներով, բերքատվությունը չափազանց ցածր էր։ Խիստ պրիմիտիվ էր նաև արդյունաբերության տեխնիկական բազան։

Դաշնակցություն պարտիան.— 1892 թվականին Թիֆլիսում կազմակերպվեց հայ բուրժուա-նացիոնալիստական դաշնակցության պարտիան, որը նպատակ ուներ ստեղծել հայ բուրժուական պետություն։ Դաշնակներն իրենց ներկայացնում էին որպես արևմտահայ ազգային ազատագրական շարժման գործիչներ, բայց, ըստ էության, նրանց ավանտյուրիստական գործելակերպը մեծ վնաս հասցրեց այդ շարժմանը։ Դաշնակցության ավանտյուրաները հաճախ առիթ էին դառնում, որպեսզի սուլթանական կառավարությունը կազմակերպի հայկական նոր ջարդեր ու կոտորածներ։

Իր քաղաքական ծրագրերի իրականացումը դաշնակցություն պարտիան ամբողջությամբ կապում էր ցարիզմի, արևմտյան իմպերիալիստական պետությունների, մասնավորապես անգլիական իմպերիալիստների նվաճողական պլանների հետ։ Նա փաստորեն հանդես էր գալիս որպես այդ պետությունների ագենտուրա։

Որպես հայ բուրժուազիայի շահերի հավատարիմ պաշտպան՝ դաշնակցությունը պայքար էր մղում Անդրկովկասում ծավալված բանվորական և գյուղացիական ռևոլյուցիոն շարժման դեմ։ Նա ամեն կերպ աշխատում էր ազգամիջյան երկպառակություն և թշնամություն առաջ բերել Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների միջև, փորձում էր քայքայել Կովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն շարժման միասնական ֆրոնտը։ Դաշնակցությունն պարտիան ձգտում էր հեռու պահել հայ բանվորներին ու գյուղացիներին համառուսական ռևոլյուցիոն շարժումից և նրանց ենթարկել հայ բուրժուազիայի շահերին։

Մարքսիզմի պրոպագանդայի առաջին քայլերը Հայաստանում.— Արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետ միասին հանդես եկավ նաև Անդրկովկասի բանվոր դասակարգը, որ ուներ ինտերնացիոնալ կազմ և գտնվում էր նյութական և իրավական խիստ ծանր պայմաններում։

1880—1890-ական թվականներին տեղի ունեցան բանվորական մասսայական շարժումներ Ռուսաստանում։ 1883 թ. հիմնվեց առաջին ռուսական մարքսիստական կազմակերպությունը՝ «Աշխատանքի ազատագրության» խմբակը Գ. Վ. Պլեխանովի ղեկավարությամբ։ 1880-ական թվականների վերջերից իր ռևոլյուցիոն գործունեությունը ծավալեց մեծ ռևոլյուցիոներ և հանճարեղ մտածող Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Դեռևս 1890-ական թվականներին նա հսկայական աշխատանք կատարեց ռևոլյուցիոն մարքսիզմի գաղափարները տարածելու ու զարգացնելու, բանվորական ռևոլյուցիոն պարտիա ստեղծելու գործում։

1890-ական թվականներին բանվորական շարժումը ծավալվեց նաև Անդրկովկասում։ Տեղի ունեցան բանվորական գործադուլներ երկաթգծի Թիֆլիսի արհեստանոցներում և դեպոյում, Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկություններում և այլն։ Միաժամանակ կազմակերպվեցին բանվորական, ուսանողական, մարքսիստական խմբակներ, սկսվեց մարքսիզմի գաղափարների տարածումը նաև Անդրկովկասում։

Անդրկովկասում մարքսիզմի գաղափարների տարածումը կատարվեց իրենց ռևոլյուցիոն գործունեության համար Կովկաս աքսորված ռուս մարքսիստների (Ի. Կոդան, Ի. Լուզին, Գ. Ֆրանչեսկի և այլն) և տեղական մարքսիստների կողմից։ Հենց այդ տարիներին իրենց ռևոլյուցիոն գործունեությունը սկսեցին Ի. Վ. Ստալինը, Լադո Կեցխովելին, Բոգդան Կնունյանցը, Ստեփան Շահումյանը և ուրիշները։

Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում ստեղծված բանվորական մարքսիստական խմբակներում մասնակցում էին նաև հայ բանվորները, որոնցից շատերը վերադառնալով Հայաստան տարածում էին այնտեղ մարքսիզմի գաղափարները։ Այդ բանը կատարվում էր նաև այն ժամանակ, երբ Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններից Հայաստան աշխատանքի էին գալիս ռուս, վրացի և այլ ազգությունների բանվորներ։ Փոքր դեր չէր խաղում նաև Ռուսաստանից Հայաստան եկող ուսանող երիտասարդությունը։ Միաժամանակ խոշոր նշանակություն ուներ նաև այն, որ Բաքվում, Թիֆլիսում տպագրված մարքսիստական, ռևոլյուցիոն բովանդակություն ունեցող կոչերն ու գրքույկները տարածվում էին նաև Հայաստանում։

1890-ական թվականների վերջերին սկսվեց մարքսիզմի գաղափարների տարածումը նաև հայ գյուղացիության մեջ։ Այսպես, օրինակ 1899 թվականին,

Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ, Ջալալ-օղլում (այժմ Ստեփանավան) գործում էր մարքսիստական մի խմբակ, որին մասնակցում էին տեղի գյուղացիները։

Բանվորների և գյուղացիների համար ստեղծված մարքսիստական խմբակներում և խմբակներից դուրս, մարքսիստները խոսում էին աշխատավորական մասսաների ծանր զրության պատճառների, ռևոլյուցիոն պայքարի անհրաժեշտության, ցարիզմի և կապիտալիզմի խորտակման անխուսափելիության մասին, մերկացնում էին բուրժուական նացիոնալիզմի ռեակցիոն լությունը, պրոպագանդա էին անում պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության իդեան և այլն։ Սակայն այս ամենը մարքսիզմի պրոպագանդայի առաջին քայլերն էին միայն։ Մարքսիզմի ավելի լայն և կազմակերպված պրոպագանդան Հայաստանում տեղի ունեցավ XX դարի սկզբներին։